

Հ.Յ. ԲՐԵՐՈՅԻ
ՊԱՐԿԵՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԴԻՍՇԿԿ


«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

1907

„Droschak“
ORGAN
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱԶՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Հ Ա Կ Ա Հ Ա Ր Ի Ա Ծ Ը

Մի քանի ամիս առաջ էր միայն, երբ Բոմանովների ներկայ շառաւիղը նախկին Գումայի անսպասելի հարձակոնքից շճած՝ երկիրը խաղաղացնելու և իր գահը անսասան պահելու միակ միջոցը համարեց՝ Տաւրիկեան պալատի դռները գոցող հռչակաւոր ու կ ա գ ը ստորագրել:

Խնդութեան մի ժպիտ անցաւ բոլոր „հայրենասէրների“ դէմքով: Ռուսաստանը փրկւած է՝, գոչեցին նրանք:

Գումայի անդամները դուրս շարուեցան որպէս հայրենիքի դաւաճաններ և քլեցան այս ու այն կողմ՝ պատմելու ռուս ժողովրդին այն ընդունելութիւնը, որ նրանք գտան ցարից—մ ու ժ ի կ ի փ ո թ թ ը ա ս տ ծ ու ց—և զգացնել տալու ամենուրեք այն հարւածը, որ այնչափ բրտորէն հասաւ տանջող Ռուսաստանին Գարբի մթութեան քողով շղարշած գիւղացու ուղեղը ցնցեց և նա զգաց իրեն դէմ յանդիման մի ախտաւոր թշնամու արմատացած նախապաշարուով վայրկենապէս օդը ցնդեց այդ կոպիտ ապտակից, որ գալիս էր մի օրում Ռուսաստանի ժողովուրդների մէջ ազատութեան տենչը հրահրելու աւելի բան այդ կարող էր անել յեղափոխական պրօպագանդը տարիների ընթացքում: Գա մի զօրեղ սթափեցուցիչ դեղ էր ռուս ամբոխի համար՝ իր չարն ու բարին ճանաչելու գործում:

Եւ նա ճանաչեց...

Բոլոր ձախակողմեանները զսպւած լաւագոյն Գումայ ունենալու հեռանկարով տարան այդ հարւածը լուռ ու մունջ... և գործեցին:

Անբացատրելի լուռութիւնը յեղափոխական Ռուսաստանի կողմից էլ աւելի քաջալերեց նիկոլային, և նա յաղթանակը տարած կարծելով՝ լարեց իր ամբողջ դաւադիր կազմը—հրաւեր կարդաց „հարազատ զաւակների“ համախմբել իր շուրջը սրբազան հայրենիքի վերածնութեան համար:

Եւ նրանք համախմբեցին... ու ցրեցին դէպի գաւառները, դէպի ընդարձակ Ռուսաստանի մութ անկիւնները՝ համողելու ամենքին անխտիր՝ առաջիկայ Գումայի համար ընտրել պատգամաւորներ, կամակա-

տար ու հաճոյակատար—պօպեր ու տիրացուներ, պաշտօնից վաճառած չինովնիկներ և ամեն կարգի երկոտանիներ, բայց ոչ երբէք մարդիկ:

Պայքարն ուժեղ էր և անօրինակելի. մի կողմն էին բոլոր մութ տարրերը—խ ու լ ի գ ա ն ն ե ռ ը—պաշտօնեաներ, յայտնի ու գաղտնի ոստիկաններ, օրթօքօքս եկեղեցու „օրթօքօքս“ սպասաւորներ, „հաւատարիմ“ զինւորներ, հպարտ ու ինքնահաւան, հրամայող ու սաստող սևինների և կնուտի երկրպագուները: Միւս կողմն էին նորաբողբոջ ծիլերը—յ ե Ղ ա փ ո թ ա կ ան ն ե ռ ը—բժիշկներ ու փաստաբաններ, ուսանողներ ու ուսուցիչներ, գրագէտներ ու հրապարակախօսներ և նախկին Գումայից քլած „անարժաններ“, համեստ ու հեզահամբոյր, խրախուսող ու յուսադրող ազատութեան ու եղբայրութեան ջահը ձեռքերին:

Եւ ռուս մուժիկը լսեց երկուսին էլ իր սովորական և դարաւոր համբերութեամբ. լսեց ու խորհեց և նրա խոհեքը շատ էին խորհրդաւոր... բայց նա մոռացաւ արդեօք այն ապտակը, որ մինչև նրա ոգու խորքն էր թափանցել: Ժողովուրդը յարմար առիթի էր սպասում իր քւէն տալու:

Հրձեց մի բոպէ ցարը, որ ժողովուրդը լուռ է, ուրեմն և համաձայն իր նշանակածներին ընտրելու: Ծափ զարկեց նա իր պալատում: Մի՞թէ ժողովուրդը, և այն էլ ռուս տգէտ ու կոպիտ գիւղացին, կարող է այնչափ յիշաչար լինել՝ ամիսներ առաջ իրեն հասած ապտակը չը մոռանալու աստիճան. օ՛, նա այդչափ զգայուն չէ: Եւ ցարը երազեց մի բոպէ. ահա նոր Գումայ գումարւած ցանկացած խրաւիլակներից, որոնք ամեն օրէնք կը մշակեն, ամեն ծրագիր կառաջարկեն ուղիղ այնպէս, ինչպէս ինքն է հրամայում, կամ աւելի ճիշտ, ինչպէս Ստոլիպինն է թելագրում հրամայել. և ահա եւրոպական բանկերի դռները բաց են ռուսական փոխառութիւնների համար: Եւրոպայի գանձը իր ետևն ունենալուն պէս այլ ևս յեղափոխական շարժում գոյութիւն չունի. բանտ ու արքոր, գնդակ ու կանաղան յութիւն չունի. բանտ ու արքոր, գնդակ ու կանաղան—ահա միջոցները, որոնցով նա մի բանի օրում վերացնում է „չարիքը“ և սկսում է իր թագաւորութեան մի փառաւոր շրջան, նման իր հօր, Ալէքսանդր Գ.—ի տիրապետութեան ամենահպատակ շրջանին, երբ իր մի խօսքը բաւական է դողացնելու հարիւր յիսուն

միլիոննոց ազգաբնակչութիւնը, մի հրամանը՝ լռեցնելու ռուսական ամբողջ ըմբոստացումը և մի ուկրաին արևել-նով խեղդելու ամեն ինչ և հոգ ու. ազատութիւնը ղառանցանքները՝ Բոմանօվների ընտանիքը միշտ տէր ու ինքնակալ, նրա սատրապները մի-մի լիազօրներ կովկասում, լեհաստանում, Վինլանդիայում... Ինքնակալ Ռուսաստանի նախկին գոռոզ ու անասան հմայքը վերականգնանցած՝ սաւառնում է ոչ միայն իր ընդարձակ սահմանների մէջ պարփակուող հարկւրաւոր ազգերի ու լեզուների վրայ, այլ և դէնը, հեռու, սահմաններից շատ հեռու, դէպի Բալկան, Փոքր-Ասիա, Պարսկաստան, Հնդկաստան, Չինաստան...

Եւ այդ քաղցր երազների մէջ իրար ետեւից հասնում են հեռագիրները—գաւառներից թռչող բոթերը մէկը միւսից գուժկան, մէկը միւսից յուսահատ: Ժողովրդի սե քէններն են դրանք՝ կառավարական թեկնածուներին:

ՈՐԱԿԻՍԻ ԵՐԱՅԻՄԱՆԻ

Երկրորդ գլուխում հնչող ցասկոտ յարձակումները բերօրիատիայի դէմ խլացնում են ցարի ականջները. այնտեղ զրւած սպառնալից պահանջները կօշմարի պէս ցցւած են նրա երեւակայութեան մէջ: Բազմամիլիոն ժողովրդի միահամուռ ապտակն է դա, որ իբրև հակահարձակ իջնում է նիկոլայի երեսին, և գլուխը կորցրած նրա թափից, մի նոր ուկրաին է մրմնջում նա...

Բայց ո՞րպիսի ուկրաին որոշելը դժւար է: Արկին ժողովրդի՞ն պիմել. նրան ապակինել այլևս ուշ է: Ո՞ւմ դիմել սեփնների՞ն: Ունի՞ արդեօք այդչափի վստահութիւն Ի՞նչ են պատմում կրօնապետն ու Սեաստօպօլը. մտքի խմորումը յուսագիր տեղ թողնել է այլևս ցարի տատանումներին:

Եւ նա ապուշ կտրած նախագգում է, որ նոյնիսկ սեփնները՝ անտառի խտութեամբ սեւացած Պետերբուրգի շուրջը՝ լուռ հանդիսատեսի դեր են կատարելու, երբ ռուսական մեծ յեղափոխութեան ուժերը հոսանքը մօտ ապագայում, և նա հեռու չէ, պիտի գայ խորտակելու ցարերի ամենակուլ Բաստիլը:

Մ Ի Փ Ա Ս Ե Ի Ս

Ներկայ փաստաթուղթը, գրւած ճեփին գործերի մինիստր Սոլիպիևի կողմից Հայոց կաթողիկոսին, արևի ևճ, „Ռոսակի“ ընթերցողներին, որպէս մի յայտնի ակն ռուս կառավարութեան բռնակալութեան, որ մի անգամ եւս գայիս է օրիշու ցարական այն մանիբէտը, որով կառավարական պատճեններն ձեռնով նայ հոգեւորականների անտուրիլը բարձրած էր համարում:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ

ՄԻՆԻՍՏՐ

№ 4271

21 օգոստոս, 1906

Պետերբուրգ

Ձերը Սրբութիւն Ողորմած չովկապետ,

Պէ հեռուում թէօդոսիայի ժամանակաւոր գեներալ-նախագահականի յարուցած միջնորդութեան,

յետս կոչելու և հեռացնելու պաշտօնավարութիւնից թէօդոսիայի Հայ-Լուսաւորչական եկեղեցիների ներքէն ներսէս քահանայ Հերթեցեանին, նորա չափազանց վնասակար ուղղութեան և գործունէութեան համար, որ առաջացրել էր քաղաքի Հայազգաբնակչութեան մէջ յուզում, որ և տարածել էր տեղական զինւորական բանակի մէջ, Էջմիածնի Սինօդը կարգադրել էր յիշեալ քահանայի մասին, հեռացնել նրան պաշտօնավարութիւնից՝ արգելելով Գ.Օն գետի վրայ եղած նախիջևան քաղաքի սխալ վանքում: Սակայն Ձերդ Սրբութեան հեռագրի համաձայն Հերթեցեան ներսէսը Վերագործած է թէօդոսիա:

Պէ նկատի առնելով, որ Էջմիածնի Հայ-Լուսաւորչական Սինօդը, որի պարտականութիւնն է հրահրել իրեն ենթարկուող պաշտօնակատար անձանց գործունէութեանը, յիշեալ քահանային աքսորելը կհատարել է ուղիղ տիրող օրինաց համաձայն, (տես յօդուածներ 1141 և 1146 օտար գաւառութեանց կանոնագրքի), եւ անհրաժեշտ եմ համարում Ձերդ Սրբութեան ուշադրութիւնը հրաւիրելու այն բանի վրայ, որ Ձեր կարգադրութիւնը վերոյիշեալ հոգեւորականի վերագործի համար—դէպի այնտեղ, ուր նրա մուտ գործելը կառավարութեան կողմից վնասակար է ճանաչւած, չի կարող լինել Պետական շահերին համապատասխան. որովհետեւ նա կը ստեղծէ կառավարութեան համար մի դժւար կացութիւն կուեցուցնէ երևան եկած յեղափոխական շարժման զգէմ:

Յանձնելով ինձ Ձեր Հովկարական աղօթից, որունիմ շնորհ լինելու Ձերդ Սրբութեան Ծառայ

Պ. ՍՍՈՒՊԻՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Ն Ա Ս Ա Կ Վ Ա Ս Պ Ո Ւ Ի Ր Ա Կ Ա Ն Է Ն

ՎԱՆ, 26 դեկտեմբեր 1906

Մեր օրւան կեանքին մէջ իբր աչքի զարնող նարութիւն Վանի կուսակալին պաշտօնակուութիւնն է: Ինք՝ վալին բնիկ ալպանացի ծերունի մըն էր, որ բաւական տարիներ վարեց Վանի կուսակալութիւնը, ձգելով պատւաւոր և շիտակ մարդու համբաւ: Տաճկաստանի և մասնաւորապէս հայկական գաւառներուն մէջ թիւրք կառավարիչները պէտք է բաժնել երկու դասակարգի, որոնք նպատակի՞ տայինքն հայ տարրը իր բնաշխարհին մէջ որչափ կարելի է տկարացնելու գործին մէջ համակարծիք են, բայց ուղղութեան, աւելի ճիշդ, այս նպատակին հասնելու տակտիքայի մէջ կը տարբերին: Մի մասը, որ մեծամասնութիւն կը կազմէ, գազանային բնազդներով օժտւած, պրօփոկատոր, վերէն իբր կարգախօս ստացած—ճնշել հայ տարրը—երբէք զանազանութիւն չի դներ միջոցներու մէջ այս նպատակին հասնելու, երկրորդ մասը՝ աւելի նրբամիտ, սոցոսկուն, քաղաքագէտ, բառի թրքական իմաստով, միջոցներու մէջ կը զգուշանայ աղմկայող դէպքեր ստեղծել և արկունաքամ կ'ընէ ժողովուրդը առանց ցըն-

դած է աղջիկ մը առեւանգել: Այս բանն իմանալով՝ հայ երիտասարդները կը հասնին աղբիւրի մօտ և բազազազաբար խոստովանուիմք կը մօտենան թիւրքերուն և կը ինդրեն որ հեռանան՝ քանի որ «նամէհրամ» ի յատուկ տեղ մըն է: Այս փոքր դիտողութիւնը բաւական կը լինի թիւրքերու զայրոյթի պայթելուն. անմիջապէս կը դիմեն դէնքի և դիտապաստ կը սպաննեն երիտասարդ մը. մահացու հարած մը կուտան միւսին, որ երկուօր վերջ մեռաւ. սաստիկ կը գանակոծեն շատերը: Բարեբաղդաբար գիւղին մէջ կը գտնուին հարկահաւար օստիկաններ, որոնք դէպքին վայրը կը փութան և եղելութիւնը տեղին վրայ քննելով՝ հայերուն անմեղութիւնը կը հաստատեն և քաղաք հասնելուն այն մտքով տեղեկագիր կուտան կառավարութեան, որը սակայն, հակառակ պաշտօնական տեղեկագրի, բանտարկեց վիրաւորած հայերը, սպառնալով նաև կոտորել ջարդել բոլոր հայերը:

Ղարաբղ գիւղին մէջ, ժողովուրդը եկեղեցին գտնած պահուն, թիւրք ամբողջ ներս կը խուժէ և աղօթողները կը ծծէ և կ'անարգէ: Անշուշտ ասոնք լաւ նշաններ չեն, բայց միտարական այն է որ ժողովրդական թիւրք շարժման պետերը՝ 18—20 մարդիկ ուղարկած են դաշտի գիւղերը, որպէսզի համոզեն թիւրք գիւղացիները հանդարտ մնալու և յայտիսի վնասակար քայլեր չառնելու: 2ը գիտենք որքան պիտի յաջողին:

Նոր կուսակալ Ալի Պէյը վայրենի հակումներ ցոյց կուտայ: Իր նկատմամբ հիւպատոսական շրջաններու կարծիքներն ալ աննպաստ են:

Տարածախուժիւնները՝ թէ պայրամէն վերջ խառնութիւնները պիտի փակուին, ցոյցեր տեղի պիտի ունենան— միշտ կը շարունակուին: Քաղաքին մէջ թրքո-հայկական յարաբերութիւնները առհասարակ լաւ են: Թիւրք ժողովրդի մէջ իրենց իսկական վիճակի գիտակցութեան զարթոնումներ կը նշմարուին հետզհետէ: Տարածւած կոչերը կը ցնցեն ժողովուրդը. իսկ կառավարական ճշնշուումներն ալ իրենց կարգին: Իբր թէ հարկահաւարութեան գործերու մէջ բացեր գտած են և կ'ուզեն անոնց տեղը լրացնել բարդելով ժողովրդի վրայ Միմիայն Վան հայ գիւղէն 600 ոսկի կը պահանջեն. կրնաք երեւակայել մեր դրութիւնը...

ԶՄՇԿԱԾԱԳԻ ՇՐՋԱՆԸ

(Համառօտ տեղեկագիր)

20 Յոյնմբեր 1906.

Նպատակ ունենալով Չմշխածագի շրջանի մասին համառօտակի տեղեկութիւն մը տալ «Դրօշակի» ընթերցողներուն, մենք զանց առինք նկարագրել անոր աշխարհագրական դիրքն ու սահմանները՝ մտածելով որ ասիկա մեզ շատ հետաքրքու կը տանէր. ուստի մենք աւելի նպատակայարմար նշկատեցինք նոյն շրջանի ներկայ դրութեան, հայ գիւղերու և գիւղացու վիճակի և կառավարութեան ընթացքի մասին ծանօթութիւններ տալ: Կարելի էր խորհիլ որ այսպիսի ծանօթութիւններ տրուած լինէին անցեալի մէջ, բայց թիւրք բէժիմի տակ ճնշող երկիրը շարունակ փոփոխութիւններու ենթակայ է, ոչ թէ դէպի լաւ, դէպի վարգացում, դէպի բարգաւաճում, այլ ընդհակառակը, դէպի վատ, դէպի ետ, դէպի անկում:

Մեր շրջանը մօտ լինելով Տերսիմին, կարելի էր անոր

մասին քանի մը խօսք խօսիլ: Բայց առայժմ նոյնպէս այս կէտն ալ լուրութեամբ պիտի անցնինք: Միայն այսքանը պէտք է յայտնել, որ այս ազատ լեռան ազատ զաւակները ենթակայ չեն թիւրքական լուծին և իրենց լեռներու բարձրութենէն իրաւունք ունին խրոխտաբար նայելու հայերու վրայ և անշուշտ սրտի գոհունակութիւն զգան տեսնելով, որ թէև իրենց նախնիքը ժամանակին փոխած են իրենց կրօնական դաւանանքը, հրաժարած են հայ անունէն, բայց այժմ իրենք մնացեր են ազատ, հպարտ ու խրոխտ և միանգամայն տէր իրենց ճակատագրին:

Յատկանշանկ երևոյթ մը միայն Տերսիմին քրդանալով ընդունած է Շիի դաւանանքը, և հետաքրքրական է, որ Տաճկաստանի մէջ այս դաւանանքին հետևողներ ընդհանրապէս կ'ատեն Սիւննի թիւրքերը և համակրութեամբ կը վարեն քրիստոնեաներու—մասնաւորապէս հայերու հետ, որոնց հետ շատ վայրերու մէջ շփման մէջ են: Թիւրքերու դէմ ատելութեան և հայերու համակրութեան մի նոր փաստը պէտք է համարել այն լուրը, որ վերջերս տարածւած էր. այն է թէ՛ սահմանազլի առթիւ Պարսկաստանի և Տաճկաստանի միջև պատերազմ մը ծագելու պարագային իրենք անցնին Պարսկաստանի կողմը և ամեն կերպ պաշտպան հանդիսանան հայերուն, որովհետեւ, ըսեր են, իրենց դաւանակից պարսիկ Շահը միշտ կը պաշտպանէ հայերը:

Տերսիմի մասին այսքան խօսելէ յետոյ անցնինք Չմշխածագի հայրութեան մասին գաղափար մը տալու:

Բ ն ա կ շ ու լ թ ի լ ն ը: Չմշխածագ գիւղացիները կը գտնուի Նարբեղի նահանգին մէջ, Ունի մօտ 500 տուն բնակիչ, որոնց 200-ը հայեր են: Գիւղերը մօտաւորապէս կը լինին 96, մեծ մասը թիւրք: Հայաբնակ գիւղերը հետեւեալներն են.

Ի ւ շ Բ է կ:—քաղաքէն քառօրէ ժամ հեռու դէպ արեւելք, ունի 220 տուն՝ զուտ հայաբնակ:

Հ ա զ ա Ր ի:—քաղաքէն 2 ժամ դէպի հիւսիս, ունի 90—100 տուն՝ գուտ հայաբնակ:

Մ ա մ ո ա:—քաղաքէն երկու և կէս ժամ դէպի արեւմուտք, ունի 80—90 տուն, յոյն և հայ խառն, մեծ մասը հայ:

Ս ե ս ն ա:—Մամնաէն մօտ կէս ժամ դէպի հարաւ, թրք-քախառն, ունի 45—50 տուն:

Վ ա Ր մ Ր ի:—Մամնայէն մօտ մի ժամ դէպ արեւմուտք, ունի 60—70 տուն, թրքախառն:

Ե Ր Ի ց ա զ ա Ր ա կ:—քաղաքէն մէկ և կէս ժամ դէպ արեւմուտք, 50—60 տուն զուտ հայաբնակ:

Մ ո լ լ ն ա յ ի:—քաղաքի ճիշդ դիմաց, մօտ մի ժամ հեռու անկէ, ունի 20—25 տուն, զուտ հայաբնակ:

Բ Ր Է խ ի:—քաղաքէն մէկ ու կէս ժամ դէպ հարաւ-արեւմուտք, ունի մօտ 20 տուն՝ ժամանակու զուտ հայաբնակ, իսկ այժմ մեծ մասը թիւրք:

Մ օ Ր շ ի ա ն:—քաղաքէն 3 ժամ դէպ արեւմուտք. 30 տուն, որուն 3-ը թիւրք:

Բ ա զ է Բ ո լ ն:—Մօրշխանէն կէս ժամ դէպ հարաւ, 25 տուն, հայաբնակ:

Գ ա Ր ա Տ ի ս ա Ր:—քաղաքէն երեք ու կէս ժամ դէպ հարաւ, ունի մօտ 90 տուն բնակիչ, որոնց մեծ մասը հայ և մնացեալը թիւրք:

Մ է զ ի ր է:—քաղաքէն 4 ժամ դէպ հարաւ, 30—35 տուն թրքախառն:

Բ ա Ղ շ է Ճ ի ք:—Մեղիլիցի մօտ մէկ ժամ, ունի 30—35 տուն, զուտ հայաբնակ:

Բ է Գ Ր է թ Ե լ:—քաղաքէն երկու և կէս ժամ հեռու, 15 տուն, զուտ հայ:

Վ ա ս ա կ ա լ ա ն:—քաղաքէն 3 ժամ, 20 տուն. մի քանի տուն թիւրքէ զատ՝ բոլորն ալ հայ:

Խ ա չ տ ո լ ն:—Քիւրդ ցեղապետ Տեապի գիւղը: Ասկէց տարի մը առաջ չէն էր. վերջերս իր թշնամիներ

բու կողմէ աւարի տրեցաւ և հայ բնակիչները
ցրեցան:

Մի առ ու յ. — Եփրատի ափերու վրայ, դէպքէն առաջ
2 միլիածագի առաջնակարգ գիւղերէն մէկն էր
120—150 տուն բնակչով, այժմ աւերակաց կոյտ
է դարձեր, պահելով իբրև յիշատակ իր նախ-
կին վիճակէն հազիւ 4—5 տուն:

Յ ա ղ թ ու յ ք. — Քաղաքէն 4 ժամ արևելք. 3՝—40
տուն, զուտ հայաբնակ:

Խ ա Ր տ ի շ ա Ր. — Յաղթունքի մօտ, 10—15 տուն, մեծ
մասը քիւրդ:

Ս ա կ ա տ ե կ. — 20—25 տուն, մեծ մասը քիւրդ:

Ա զ ա Ր ա կ. — Քիւրդ Տեապի գիւղը, (ուր ձերբակալեց
Ըման իր ընկերներով) ամբողջութեամբ քիւրդ,
բացի մի քանի հայ ձորպաներէ, որոնք կը ծա-
ռայեն Տեապին:

Ասոնցմէ գատ կան շատ մը հայ գիւղեր, որոնք այժմ
բոլորովին անշէն մնացած են: Հարկ չենք տեսներ յիշա-
տակել մի առ մի տաճկական գիւղերը, որոնք շատ ու շատ
են: Ամենաբազմամարդ և նշանաւորներն են՝ Ս. Թորոսի և
Պարասորի գիւղերը, որոնցմէ Պաշ Ագարակ և Պաշ Ար-
դնիք ունին աւելի քան 500 բնակիչ:

Վերսիշեալ հայ գիւղերէն Հազարի և Յաղթունքը, ինչ-
պէս նաև Իւչպէն ու Միատունը վերջին ծայր կասկածելի
նկատած են կառավարութեան աչքին: Կասկածելի անոր
համար որ իբր թէ առաջի երեքը գտնւելով լեռան շատ
մօտ, իբր ե ա թ ա խ (Թաքսոտ) կը ծառայեն ֆէդայիներու
իսկ վերջինը իբր թէ գէնքի շտեմարան եղած է, լինելով
Եփրատի վրայ և աջակցեր է ու կ'աջակցէ միշտ գէնքի
Եփրատի վրայ և աջակցեր է ու կ'աջակցէ միշտ գէնքի
փոխադրութեան գործին: Այս այս պատճառով կառավա-
րութիւնը պարբերական խուզարկութիւններով չի գոհանա-
լով: Յաղթունքի մէջ դրեր է 20-էն աւելի զինուոր, Իւչ-
պէն մէջ մշտական պահակ և ոստիկան և 2 զափթիկներ,
Հազարի մէջ, ինչպէս կը պատմեն, մի կորստն բաղկա-
ցած 3—4 հեծեալ զափթիկներէ, իսկ Միատունը, պէս
կ'ենթարկել իրիտ խուզարկութեան ու հսկողութեան,
և հոն չի ուղարկուի զինուոր կամ ոստիկան այն պատճա-
ռով, որ անոնք վերին աստիճանի աղքատ են և չեն կարող
կերակրել սուլթանի անօթի զինուորները:

Այս գիւղերէն քիչ-շատ բարեկեցիկ վիճակ ունեցողներն
են՝ Յ ա ղ թ ու յ ք, Խ ա Ր տ ի շ ա Ր, Ս ա կ ա տ ե կ և
Հ ա զ ա Ր ի: Յաղթունքը լինելով Տերոսի մի սահմանին շատ
մօտիկ, միևնոյն ժամանակ իր քաջութեան շնորհիւ՝ համա-
կրութիւնը շահած լինելով խօսուշաղի կուշած ամենաբաշ
և ամենաաւազակ քիւրդ ցեղին, միշտ ազատ է կառավարա-
կան ճնշումներէ՝ համեմատած ուրիշ գիւղերու, և անոր
բնակիչները, դէպքի ժամանակ, ինչպէս նաև վերջին ան-
գամ իրենց պատկանած քիւրդ ցեղի և Ֆերհատանցիներու
մէջ տեղի ունեցած կռիւ մէջ, չախմախի և եղալի հը-
մացաններով շատ լաւ կուշեցան և չը թողին որ թշնամին
գիւղը մտնէ: Զմիկածագի գիւղերու մէջ ամենահանգիստը սա
է. քիւրդերու կողմէն բոլորովին ապահով, իսկ կառավա-
րութիւնը չի վարել որ անոնց հետ այնպէս, ինչպէս կը
վարել ուրիշ գիւղացիներու հետ:

Խարտիչար գիւղը բացի մէկ ընտանիքէ, զուտ քիւրդ
գիւղ է, և այն հայն ալ որ ասոնց մէջ կը գտնուի, եր-
բէք չի գնազանել որ անոնցմէ: Երբ առիթը ներկայանայ,
մի ուրիշ ցեղի հետ կուշելու, նա ալ կը մասնակցի անոնց
և իր ցոյց տուած քաջութեան շնորհիւ իր ցեղապետին
սիրելին եղած է, որը առանց անոր ոչ մի տեղ չ'երթար
առանձին, նա արդէն տարիքն առած 60-ի մօտ մօրդ է,
սակայն տակաւին առողջ ու կարիճ. իր թաւ ձորոցը եր-
կայն ու թիկնեղ հասակը, կարմրուն այտերը ցոյց կը տան
անոր կազմի առողջութիւնը: Նա հայասեր է, բայց գուրկ բո-
լորովին գաղակարէ և միմիայն քրդախօս:

Հազարի Գիւղը Զմիկածագի գիւղերէն ամենաբարեկեցի-
կը և ամենաբազմամարդն է: Բնակիչները իրենց պա-
պերէն Պոլոյ մէջ կալածներ ժառանգած լինելով,
այդ կալածներու օգնութեամբ և իրենց անդու աշ-
խատութեամբ՝ պէտքը չեն գգացած թողնել իրենց հայ-

րենի օճախը և դնալ պանդխտութիւն: Չենք ուզեր ասել
թէ անոնցմէ ոչ ոք ելած է պանդխտութեան, կան պան-
դխտներ, բայց համեմատաբար քիչ են: Մնալով հայրենի-
քի մէջ՝ որի օր կ'աճին ու կը բազմանան. երիտասարդու-
թեան թիւը կը ստարանայ: Եւ ահա ասոր համար է, որ
անոնք աչքի փուշ գառնալով կառավարութեան, եղբր են
նաև մշտական որսը բարբարոս քիւրդերուն: Կառավարու-
թիւնը երբեք պատրակ չի փակցներ կեանքին հացը,
մանաւանդ Հազարի կեանքինը, որ այնքան դուր եկած է
իր քիւրդին, ուտելու. եթէ երբեք առիթ չի գտնէ,
իր քիւրդին, ուտելու. եթէ երբեք առիթ չի գտնէ,
անոնց համար պատրաստ է ըսել թէ—ինչ որ անծանօթ
մարդիկ անցեր են այդ գիւղէն և զնացեր լեռը, ուտի
պէտք է խուզարկութիւն կատարել, հարցաքննել և նոյնիսկ,
գէթ առնալն մի քանի շաբաթ, պահակներ կարգել
Եթէ այս վերջին միջոցն ալ չի լինի, կ'ըսեն.— «Հազա-
րի կեանքները քիւրդերու հետ բանակցութեան մտեր են,
պիտի ապստամբին և արդէն անոնք են, որ վառօդ և ազ-
մամթերը կը տան քիւրդերուն»: Վերջապէս ինչ՞ գիւղ
մէկ կողմէն թիւրք կառավարութեան, միւս կողմէն քիւր-
դերու բարբարոսութեան իմաստ մը դարձած է:

Ուշադրութեան արժանի է այս գիւղացուց վերջին
ծայր հիւրասիրութիւնը, միութիւնն ու սէրը իրարու
հետ երբ մի օտարական կը գայ իրենց մօտ, անմի-
ջապէս մեծ ու պզտիկ, առանց հասակի խտրութեան, կը
բոլորին անոր շուրջը և տեղեկութիւններ կը հարցնեն օր-
ւան դէպքերու վերաբերմամբ: Գիւղացիներու մեծ մասը
իրենց հետաքրքրութեան պատճառով կը ստանան պօլսական
թերթեր, որոնք սակայն չեն կարող անոնց պահանջներուն
գոհացում տալ:

Ս Ղ Ե Ր Գ Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

ՊԻՏԻՄ, 28 դեկտեմբեր 1906

Նախորդ նամակով գրած եմ Պշարի մասին: Նա
սուլթանի զօրքերէն հալածուած վերջապէս ճիւղրէ կ'ա-
պստանի միբանցի Համէէ Ապսիլքերիմ փաշային:
Քով և մինչև ամարանոց կ'ընկերանայ անոր՝ ցեղակից-
ներու հետ: Շատախի կողմերը թէև կառավարական
հետապնդումներէն ազատ, բայց այս կեանքէն չը կըր-
նալով համ առնել, օր առաջ Ղարզան մտնելու և չա-
րագործութեան ներքին հակումներուն յագուրդ առ-
լու առաջադրութեամբ, իր չորս եղբարց հետ ամա-
րանոցը կը թողու և շունչը կ'առնէ ուղղակի Համի-
տիէ Իպրահիմ փաշայի վրանները, Վերան-Շէհիբ
Թերևս ատոր շնորհիւ ներման արժանանայ և անգամ
մ'ալ ոտքի կուռան ունենայ իր սիրելի Ղարզանի մէջ:
Ուսկից ո՛ր:

Այն Պշարը, որ թէ Սղերգի և թէ Տիարպէրի
կառավարութիւնները կը ցնցեր և զինուորականութիւ-
նը կը դողացներ՝ ասպարէզ կարողով անոնցմէ ամե-
նափոքը յանդգնութիւն մը ձայնողին, այն՝ որ կայսեր
քանի մը վաշտ զօրքերով, ձիաւորներով թնդանութեն-
քով անկարելի եղաւ ձերբակալել՝ այժմ դռնէ դուռ,
աշխարհէ աշխարհ ինկած ներում կը հայցէ, կը թա-
խանձէ: Ապահովապէս՝ ուշ կամ կանուխ՝ առանց այդ
ներման պիտի գայ հաստատուիլ իր աշխրէթին գիրկը:
Շնորհիւ իր պաշտպաններուն: Ինչպէս կը գտնէք սա
բրգօ-թրքական բազաբանութիւնը:

Սեպտ. 7.—Ուշքութեան աշխրէթի պետ Ամօ աղէն՝ իր
ծառաններէն բազմէ անուն քիւրդը Հիզնամիր կը դրկէ,
աղայական իրաւունքը, — սուրբ — գանձելու համար: Հա-
ւատարիմ ծառան նկատելով որ իր պահանջածը վայր-

կենսապէս չի վճարւիր, կէս ժամ մը չը սպասելով գիւղապետ Սուրբատին տունը կ'երթայ իրիկան ժամը տասին՝ և տուրքերուն մէկ մասնավճարը (20 մէճիտ) չը վճարած ըլլալուն՝ տեղն ու տեղը զայն կը սպաննէ: Սեպտ. 2.—Սղերդի բանտին մէջ քանի մը քիւրդ ոճրագործներ պարզապէս իրենց գազանային կարմիր պապակը անցընելու համար կը յարձակին իրենց հետ բանտակից թովմասեան ՆՏօի վրայ և դանակի հինգ վէրքեր կուտան անոր: Հէգ երիտասարդը մազապուր կ'ազատի անոնց ձեռքէն կիսամեռ վիճակի մէջ:

Սեպտ. 12.—Հացին սղութիւնը, պետական տուրքերուն օրըստօրէ աճումը, սուլթանին հաւատարիմ ծառաներուն խստութիւնները, քիւրդ աշիրէթներու յայտնի և ակներև հարստահարութիւնները կարծես անբաւական ըլլային խեղճ ժողովուրդը կեղեքելու, մերկացնելու և հուսկ ուրեմն սև մոխրի վրայ նստեցնելու, ահա ճենճոտ միւլազիմներն ալ սիմոնականութեան ախտէն վարակած՝ շեն խղճար ու իրենց իրաւասութեան սահմանէն դուրս, կը միանան այս ժողովուրդային ընդհանուր կողոպուտին, մէկի փոխարէն ութ տասանորդ գանձելով, մինչդեռ ութէն մէկն է օրինականը: Բազմաթիւ օրինակներէն միայն մէկը յիշենք հոս: Հաճի Քահիրազա-զատէ Նուրօ վարձու կ'առնէ Սղերդի մօտակայ Տէյր-Սրթաս գիւղը: Բայց նկատելով որ գլխաւոր հարստութիւն կազմող այգեստանները ցրտահար ըլլալուն պատճառաւ պիտի մնասէ և գիտնալով որ քրիստոնէին ամէնէն արդար բողոքը իսկ չի լսւիր, մնասը շահի վերածելու համար ճարպիկ միջոցով կը տասանորդէ գիւղացիներէն, կանխիկ զրամ կ'առնէ բռնութեամբ: Միմիայն երկու կողով խաղող բաղող մէկը 15 շրջ. տասանորդ վճարելուն վրայ գոհունակութիւն կը յայտնէր, բաղդատմամբ ուրիշներու, որոնք մինչև 35 շրջ. վճարած են առանց պտուղի մը համը տեսնելու:

Սեպտ. 14.—Հատհատէն կէս ժամ հեռու ճամբուն վրայ կը սպաննուի Յօնէ անուն ազգայինը, ուշքութանցի Բիւրդի մը կողմէ, որովհետև խեղճ ծերուկը միայնակ, ցորեն բերցած աւանակով, յանդգնած էր գիւղէն դուրս գար:

Հոկտ. 7.—Նագիպան գիւղախումբը (Ղարզան գաւառակին մէջ) այժմ կը պարունակէ եօթը հայաբնակ գիւղեր, ընդամենը 225 տուն, որոնք ուրիշներու բաղդատմամբ շէն ու բարգաւաճ կրնան համարել իրենց վարուցանով և զարգացումով: Այս պարագան հարևան Ռշքութան աշիրէթին ուշագրութեանէն վրիպած չըլլալով ժամանակէ մը ի վեր նա սկսած է սաստկապէս նեղել և ճնշել գիւղացի հայերը և նոյնիսկ սպաննել զանոնք: Յայտնի է որ նագիպանցիք մշտնջենի կթան կովը համարած են յիշեալ աշիրէթին, որուն կը վճարեն տարեկան որոշ տուրք (ղաֆիրի). նաև ոչխարներէն, հունձքէն, ան պատրաստի պաշարեղէններէն բաժին կը հանեն ի հարկէ ճնշումի տակ: Բայց այդ ամէնը այլևս կարևորութիւն չունին ուշքութանցիներու համար: Ասոնք պարզապէս աչք անկելով գիւղացոց տուն ու արտին՝ այսուհետև հայաջինջ քաղաքականութիւնը ձեռք առած են:

Իրերու աս տխուր վիճակին մէջ գիւղապետները, մանաւանդ Մուրատի և Յօնէի սպանութենէն յետոյ,

իրենց ինչքին ու կեանքին սպառնացող վտանգը յայտնի տեսնելով՝ գաւառակին ու նահանգին կեդրոն կառավարութեանց կը դիմեն, Պիթլիսի և Տիարպէթիի կուսակալներուն, 4-րդ զօրաբանակի միւլազիմին, Բ. Գրան և Պատրիարքարանին, որպէսզի ուշքութանցիին հարստահարութեանց և ոճրագործութեանց դէմ արգելք դնելու համար գունդ մը պահապան զօրք հաստատուի գիւղերէն մէկուն մէջ: Այս առթիւ այսօր Առաջնորդարան մատուցած խնդրագրին պատճէնը կարևոր կը համարեմ առաջ բերել հոս:

«Գերաշնորհ Սրբազան Հայր, Ղարզան գաւառակի ենթակայ Նագիպի գիւղախմբի եօթը զանազան գիւղերուն մէջ ցրած ազգայիններս, ընդամենը 225 տուն, ժամանակէ մը ի վեր կը հարստահարուինք և յայտնապէս կը կողոպուտինք Ռշքութան աշիրէթի քիւրդներուն և իրենց պետին թամոյի կողմէն: Ոչ մեր արջառ ու ոչխարին, ո՛չ մեր կալ ու կուտին և ոչ իսկ մեր անձին և ընտանեկան պատուոյն տէրն ենք:—Ամէն ժամանակէ աւելի յվերջերս սկսած են չափազանցութեան տարել նոյն քիւրդերու մեր վրայ ի գործ դրած հարստահարութիւնքն և սպանութիւնքը, որոնց կէտ նպատակն է մասամբ կանգուն մնացած մեր եօթ գիւղերն ալ հալածել, ջնջել հայ ազգաբնակչութիւնը և վերջապէս գրաւել, իւրացնել մեր բոլոր գոյքերն ու կալուածները»:

ՏՐԱՊԻՉՕՆ, յունւար 11

Մեր շրջանին մէջ թիւրքերու տրամադրութիւնը բոլորովին խաղաղ չէ. թէև ըստ երևոյթին ամեն ինչ լուռ է, բայց կառավարութիւնը երկիւղի մէջ կը գտնուի ենթադրելով ինչ-ինչ գաւաղրութիւններ իր դէմ: Որևէ խուզարկութիւն կամ քննութիւն խիստ գաղտնապահ և զգոյշ կերպով կը կատարուի: Կարինէն ևս նման տարաձայնութիւններ կը հասնին. հոն պաշտօնեաներ աւելի քան զգոյշ են, եթէ չըսենք վախկոտ, իրենց քայլերուն մէջ: Գաղտնի շշուկներ ու փսփսուկներ, նորանոր անակնկալներ գուշակող ամեն օր անպակաս են:

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՆՏԵՐԻՑ

Տանկասանի մի Լանի բաների մասին մեզ հասած նամակները աստիճան պատկերով են ներկայացնում հայ Բաղախան բանարկիւնի վիճակը. բաւական չեն բանցի ստորակամ հալ ու ևս, սնունդի ու օդի պակասութիւնը, դրանց վրայ աւելանում են մե բանարկիւնի քիւրք, Բիւրդ, զէյթիկ քարերի գործ դրած զաւանուրիւնները: Նամակները քայէ բաւական ու ե մեզ հասած, բայց նրանք միշտ նորութիւններ են, որովհետև կեանք այդ դժոխում ամեն օր նոյնն է: Ահա նմուշներ այդ նամակներից Բաղախան:

Ա.

ՊՕՏՈՒՄ, յունիս 20, 1906

... Հայ քաղաքական բանտարկեալները ճշմարիտ անօթութեան են մատնւած: Կառավարութիւնը ցամաք հացէն զատ ոչինչ չի տար: Բայց այդ ալ տանկի է,

գեղուրի գաւառապետին, իսկ միւսը՝ գեներալ Գօլօշչա-
պօվին: Աերջինին տալիս են մի հեռագիր: Աշխիստրա-
ցիայի այդ երկու ներկայացուցիչներին ուղարկած արձանա-
գրութիւններով թուրքերը հաստատում են, իրենց սեփական
ստորագրութիւններով, կատարած սոսկալի ոճիքները հայե-
րի նկատմամբ, և պահանջում են՝ խոռոչութիւնների և ընդ-
հարուանների առիթ չը տալու համար՝ եկղեկուցիա դնել
կռաթաղ գիւղում: Հաշտութեան այդ արձանագրութիւն-
ները ուղարկելուց յետոյ, հայերը նկատում են, որ Շաբա-
դին գիւղում երևում են օտարորտի անձնաւորութիւններ և
ճանաչում են Նախիջևանի գաւառի թեւի գիւղից եկած
աւազակապետ Սուլէյմանին, Շիրալուն և յայտնի Մուր-
թուզին: Քաջարանցիք նկատում են, որ Շաբադինում
բուն դրած այդ աւազակները անցել են Օխչի գիւղը և
ժողով են կազմում մօլլա Հասանի տանը: Ժողովին մաս-
նակցողներն են. շաբադինցի Իսմիխանը, Շափաղլուն, Մեխ-
տին, Հաթիվալ, Մախուտը, Շէյխսամադը, փիրդավդանցի
Քեարբալայ Սարուն, Քեարբալայ Մուսան, Գունեամալին, Էյլա-
զը, Մօլլա Հիւսէին Ալին, Ամբարը և Մութալիմը: Ժողովից
յետոյ այդ խումբը բաժանում են երեք մասի. մի մասը
մնում է Օխչի-Ատկիչ, միւսը՝ Փիրդավդան և երրորդը՝
Շաբադին: Թուրքերը հայերի աչքերին թող փչելու և
քննեցնելու համար, ուղարկում են 12 թուրք ախսախ-
կալն եր քաջարանցիների մօտ և ասում՝ «Չը նայած
որ մեր մէջ երևացել են ջանքեղարներ, բայց թող դրանց
ներկայութիւնը ձեզ երկիւղ չը ներշնչէ. մենք ազնիւ խօսք
ենք տալիս, որ ոչինչ չի պատահի, մեր ստորագրած և ու-
ղարկած արձանագրութիւնները ձեզ համար հաստատ ապա-
ցոյց կարող են լինել, որ մեր հաշտութիւնը անխախտելի
է. դրանց հեռացնելու նպատակով 500 ր. փող ենք ժողո-
վել. պիտի յանձնենք ջանքեղարներին և պահանջենք որ
հեռանան»:

Հայերը եկեղեցու գլխին ամուր դիրքեր են շինում
հասկանալով, որ սոսկալի դաւադրութիւնների ծրագիրներ
են կազմում, բոլորովին չը հաւատարմով և նշանակութիւն
չը տալով թուրքերի խարբայական խօսքերին: Այդ ժո-
ղովից երկու օր անցած, քաջարանցիները մի հեռագիր են
կազմում և յանձնում իրենց համագիւղացի Թադէոս Մի-
նասեանցին, Աղաբէգ Մինասեանցին և Ներսէս Բաղդասա-
րեանցին՝ պարտաւորեցնելով Ագուլիսից հեռագրել: Շաբա-
դինի թուրքերը գիւղից բաւականին հեռու բռնում են
այդ երեքին և գլխատում: Սպանւածների մասին հայե-
րը ոչ մի տեղեկութիւն չունենալով և վստահ թուրք ներ-
կայացուցիչներին խոստումներին, հանգիստ ու միամիտ գնում
են իրենց գործին ու աշխատանքին:

Օգոստոսի 10-ը լուսանում է... Սակայն մտայլ և սև
օր է բացւում քաջարանցիների համար: Աերին Ղափանի
Օխչի, Ատկիչ, Փիրդավդան և Շաբադին գիւղերի թուր-
քերը, Նախիջևանի գաւառի թեւի գիւղից եկած աւազակա-
պետ Սուլէյմանի ղեկավարութեամբ, ահագին վոհճակով
յարձակւում են Քաջարանց գիւղի վրայ: Հայերը
յանկարծ գգում են իրենց շրջապատած հազարա-
ւոր թշնամիներով և գնտակների տարափը իրենց ուղ-
ղած: Ժողովուրդը, խաղաղարար յանձնաժողովի անդամ
Մանգասարեանցի շուտափոյթ կարգադրութեամբ, անմիջա-
պէս հաւաքւում է եկեղեցին, ուր վաղօրօք ամուր դիրքեր
են շինւած լինում՝ պաշտպանելու համար: Ինքը՝ Մանգա-
սարեանցը, Ալեքսան Կանդազովի և մի քանի կորիճ երիտա-
սարդներին հետ բարձրանում են եկեղեցու վրայ շինած դիր-
քերը և երեք օր էրեւր յերեկ պաշտպանում են գիւղը: Մի
քանի ժամայ մէջ բոլոր արտերը, ցորենի խորձերը հըր-
դեհւում են, թալանւում են գիւղացիների բոլոր ունե-
ցածները և հրդեհւում է ամբողջ գիւղը: Աերին Ղափա-
նի հայ գիւղացիները Մաղրայի բարձունքներից նկատում
են հրեղէն բոցերը, բայց չնչին թիւ կազմելով՝ անկարող են
լինում օգնութեան գնալ մանաւանդ որ թուրքերը նախօ-
րօք թէ դիրքերն են բռնած եղել, և թէ Քաջարանց
մտնելու է օգնութեան գալու համար՝ պէտք է նախ 300
տնից բաղկացած Օխչին և 25 տնից բաղկացած Ատկիչը
հիմնադատակ դարձնել, կոտորել և սպա անցնել: Ամբողջ

երեք օր, եկեղեցու խեղդող մթնոլորտում, պաշտպանւում
են: Ոմանք դուրս են եկել՝ որպէսզի եկեղեցու մօտ գտնուող
աներից հաց բերեն, կամ փամփուշտ մատակարարեն կոււղ
կորիճներին և կամ դրսից հասնող օգնութեան ուրախալի
լուրը բերեն ժողովրդին: Այդ միջոցին եկեղեցու շէմքին
սպանւում են Թադէոս Չաքարեանց, Խոսրով Վարդա-
նեանց, Յակոբ Ալեքսանեանց, Ազան Մանգասարեանց,
(ամուսինը կուււում է եղել դիրքում՝ նրան թողել են կե-
ղեցու դրան շէմքի մօտ, առանց ամուսնուն յայտնելու):
Յարութիւն Բաղդասարեանց, Միքայէլ Ալեքսանեան (կոր-
ցրել է քիթը և մէկ աչքը) Սաբի Մահալեան և Մարիամ
Տէր-Յովհաննէսեան:

Երբ պաշարման լուրը հասաւ, յեղափոխական մարտի-
կների շարքերը անմիջապէս պատրաստւեցին օգնութեան
գնալու: Թուրքերը դինամիտով քահանայի տունը օդը հանե-
լուց յետոյ քանդում են եղել եկեղեցու արևմտեան կողմը՝
դինամիտով 590 հոգուն օդը պայթեցնելու նպատակով:
Կրիտիքական մօմենտ էր Եթէ մի քանի ժամ ևս ուշանար
տղերանց օգնութիւնը—բոլորը անդառնալի կը կորչէին:
Իսկ այդ Մեղրիից քաջ Ենօքի առաջնորդութեամբ Գե-
նուազի անվեհճեր մարտիկները՝ եղբայրներին և քոյրերին
ազատելու տենչով հասնում են, և մի աննկարագրելի ուժ-
գնութեամբ գրոհ են տալիս Նախ յարձակւում են Ատկի-
չի վրայ, թուրքերին դուրս են քշում դիրքերից և մտնե-
լով գիւղը այրում, աւերում են և սպա իջնում են դէպի
Օխչի: Յանդուգն Ենօքը և իր քաջարի խումբը, ազատութեան
դրօշակը պարզած, առաջ են արշաւում և թուրքերին ա-
հաբեկ դարձրած, հասնում են Քաջարանց:

Մեր գրիչը դժարանում է նկարագրել այն ուրախու-
թիւնը, երբ ազատութեան կրակով վառւած հերոս մար-
տիկները հասան և հազար ու մի դժարութիւններով բո-
լոր կանանց և երեխաներին տեղափոխեցին Հանդ գիւղը:
Ընթացողին ենք թողնում հասկանալու այդ հոգեկան բեր-
կանքը: Քաջարանցիներին ազատելուց յետոյ՝ Գենուազի և
Աերին Ղափանի հայ գիւղացիներից կազմակերպւած արիս-
տիկ մարտիկները և քաջարանցի կոււղ երիտասարդները
Ենօքի ղեկավարութեամբ յարձակւում են Քաջարանցից
250 քայլ հեռաւորութեան վրայ գտնուող Շաբադինի վրայ,
որ բաղկացած է 100 տնից և գրաւում են ամբողջ գիւղը:
Ահագին լեգէօն կազմող թուրքերը աւազակապետ Սուլէյ-
մանի հետ միասին փախել էին, միայն մնացել էին գլխաւոր
աւազակները՝ Իսմիխանը, Շափաղլուն, Մեխտին, Քեարբալայ
Սարուն և դրանց ընկերները: Մի տան միջից նրանց դուրս
քշելու համար սկսած կռիւը եօթ ժամ տևեց: Այս տան
մտ սպանւեց, այն էլ պատահաբար, մի հայի գնդակից, վահ-
րավարի Մկրտիչ Մինասեանցը և վիրաւորւեցին հազարակցի
Համբարձումն ու վահրավարի Եղիան: Սպանւած թուրքերի
թիւը աւելի քան մեծ է: Նոր խմբերը օրէցօր Գենուազից
տեղափոխւում էին դէպի կռիւ վայրերը:

Խմբապետները իրենց միսին կատարելուց յետոյ, քա-
ւեցին Հանդ գիւղը՝ պաշտպանելու փախտականներին և կետ-
րոնացնելու ոյժերը՝ Փիրդավդանի վրայ յարձակւելու նպա-
տակով: Քաջարանցի կոււղ վիրաւորւած տղերանց բժշ-
կական օգնութեան ցոյց տալուց յետոյ՝ թեթեւ վիրաւոր-
ւածները տեղաւորւեցին Հանդ, Քուրդիքեանդ և Փուրխուդ
գիւղերում, իսկ ծանր վիրաւորները տեղափոխուեցին Մեղրի
գիւղը:

Հանդում մարտիկների խմբին օգնութեան հասաւ Գաշ-
նակցութեան զինուորներից անվեհճեր Խէօն իր խմբով: Խում-
բերը իրենց ամբողջ ոյժով թուրքերին դուրս բերեցին
իրենց դիրքերից և յարձակւեցին Փիրդավդանի վրայ, որ 60
տնից է բաղկացած: Վաղօրօք շատերը դուրս էին տարել ի-
րենց ունեցածները. շատերը մնացել էին, այդտեղ էին ա-
պաստանած Օխչիից և Շաբադինից փախած թուրքերը: Գիւ-
ղը հրդեհեցին և պատճեցին մի խտուրթեամբ, որ պէտք
է համարել անսովոր և ծայրայեղ... Կոււղ ընկան Կալե-
րեցի Վարդան Մեղրեանը և Մատթէոս Բաբանցը,
և այդ՝ այն միջոցին երբ կռիւը համարեա վերջացել էր:
Նրանք բարձրացել էին մի քարի վրայ և ոգևորւած կո-
չում էին «Կեցցէ. Գաշնակցութիւնը»: Այդ բոպէին քարի

տանուս ձեր կանանց, մի երեք-չորս ջան ֆէդայու կուի է, եկէք թէյ խմելու, հիւր եկէք, այ՛ զեղեցիկ խանութները, խաների ձեռնարկները լսելով Մուրադի թունաւոր խօսքերը՝ դառնում են դէպի իրենց մեծերը և տունը: «Մի՛թէ կարելի է այս նամուսը տանել»: խաները պատասխանում են: «Տղերք փախէք, այս դոյնը այն դոյնից չէ. տակին մնացողը նամարդ է, փախչել պրծնելն էլ մի առանձին տղամարդու լինելն է»: Տեղական թուրքերից մասնակցողները եղել են՝ չարալուեցի՝ Մաշադի Շահվերանը, Գաբաշ բէգը, Նասիր բէգը, Ահմադ բէգը, Փատալի բէգը, Ջեբրայելի դաւառից՝ ձօժրուզուեցի Մամադ Բեարբալայ Ֆարաջ օղլին, Հայ գիւղացի յայտնի աւազակ Իսմայիլ Աբաշ օղլին, որ նորերս սպանւեց խանլըղեցի Աբբաս տանուտերի ձեռքով: Այդպիսով Ուշանիսի ենթարկուել է երեք անգամ յարձակման. այրել են 42 մարդ, 15600 խուրձ ցորեն, աւերել են 5 ջրաղաց, սպանել են 5 և վիրաւորել 13 հոգի: Ասում են, որ թուրք եկողներից կէսը չեն վերագործել:

Չենք կարող չը յիշատակել թուրքերի մէջ համակրելի գեմքերից երկուսին, որ միշտ դէմ են եղել անմիտ կուիներին: Գրանք մի-մի մարգարէներ էին իրենց ժաջրոտ կեանքի մէջ, բայց նախ համարեցին դաւաճաններ, իսկ այսօր, երբ թուրքերը սոսկալի պարտութիւններ են կրել և բառիս ամենարդարձակ մտքով քայքայուել են տնտեսապէս, այժմ միայն մեծարում են նրանց և ասում. «Երանի թէ լսէինք ձեր խօսքերը»: Գրանցից մէկը խօշակահանի Բեարբալայ Հիւսէին բէգ խօշակահանի է, իսկ միւսը Գենուզի Լեհվազ գիւղացի Բեարբալայ Մեխախին: Գաւառապետ Միսկիվիչը խօշակահանով անցնելուց հարց ու փորձ է արել Բեարբալայ Հիւսէին բէգին և մեզ ասաց որ այդ համակրելի թուրքը մեղադրում էր ամբողջապէս թուրքերին. նոյնը հաստատեց Բեարբալայ Մեխախին՝ Մեղրիում: Խաների գա-

լուց՝ Բեարբալայ Հիւսէին բէգը շատ է դիմադրել որ չը յարձակին Ուշանիսի վրայ, բայց չէն լսել: Գաւառապետի ասելով Ուշանիսի կուսում թուրքերից 600 հոգի են սպանւել:

Օգոստոս 26-ին Ենօքի և Խէջօյի խուճրը յարձակում է Աւաջմանը (20 տուն), Աջիլու (60 տուն) և Թունիս (20 տուն) թուրք գիւղերի վրայ, Աերին Ղափանի խուստափ սարի ստորոտում. գիւղերը աւերել և հըրդեհել են: Աջիլուում սպանւել են 9 թուրք. մնացած երկու գիւղի սպանւածների թիւը անյայտ է: Օգոս. 27-ին Թաղեհոսի խուճրը յարձակում է Բօղաջուղ (25 տուն) գիւղի վրայ և կրակում:

Սեպտեմբերի 6-ին, թուրքերը, յայտնի աւազակ Հայ գիւղացի Իսմայիլ Աբաշ օղլու առաջնորդութեամբ, քշում են Եղվարդ գիւղի տաւարները Մուղան անանւած տեղից: Գաշնակցութեան գիւղերները՝ միացած տեղացիներին՝ քշում են թուրքերին, յետ խլում տաւարները և թուրքերից բերում են 6 ձի, կրակում Սալդաշ գիւղի բոլոր խուրձերը և անցնում են դէպի Սալդաշի Հարթիգա սարի վրայ գանւաղ 8 օրաները. սննչացնում են բոլոր ունեցածները և գերի են վերցնում երեք հոգի: Եղվարդից ճանաչելով որ աղքատ և անմեղ ընտանիքից են, իւրաքանչիւրին մի ձեռք հագուստեղէն են տալիս և բաց թողնում: Այդ դէպքը բնդհանուր դարմանք էր առաջ բերել թուրքերի մէջ: Սեպտեմբերի 7-ին Եսպօնը իր խմբով և հազարակեցիները քշում են Ղարաշիմանից 135 տաւար, 8 ձի և 9 ջրի Գաւառապետի և զօրքի գալու պատճառով կարգադրած է եղել նախալարձակ չը լինել և շնորհիւ այդ հանդամանքի զերծ են մնում աւերումից՝ Ղարաշիմանը, Սեիվարը, Գեօզակլուն, Օխտարը, Խալալը, Կաթթաղը, Գարգիլուն և մի քանի մանր մունր գիւղեր:

(Կը շարունակւի)

Հ Ա Յ Ո Ր Գ Ի Ի Ն Ե Ր Ը

Ժ Գ.

ՈՐԲԵՐՈՒՆ ԶԱՎԱՏԱԳՐԷՆ

Չարհուրելի անցեալ, յոխերներուն վրայ ծնաք և աւերակներէն քալեցիք. երբ սուրեն զարնուած Հայրենիքը իր բերանը համոռ իր արիւնին մէջ կը խղդուէր՝ Բնութեան դժխեմ օրէնքը օր մը զձեզ մարդկութեան ճիրաններուն մէջ դրաւ, Եւ սյապէս՝ արևին և կեանքին կարմիր լոյսը շփոթեցիք ձերիններուն արիւնին հետ... Սարսափներուն յառեցուս ձեր մաքուր հայեացքը, ծաղիկներու և ժպիտի փունջերուն տեղ: Հոգեվարքի ի՛նչ հեծեծանքներ և ի՛նչ օգնութիւն պաղատող եղերական ճիշեր, Ի՛նչ դաւարում, ի՛նչ մազբուս փետում, ի՛նչ կոծ և ի՛նչ մահաձայն լաց, Ի՛նչ արցունքներու հոսումներ, ի՛նչ աղերանք և քանի՛ քանի՛ կտրուած գլուխներ, Եկան՝ ձեր մանկական վճիտ աչուրներուն առջևէն գլորելու... Ոսկորներու փշրումը լսեցիք, ձեր ծնած տանը սեմերուն վրայ, Գիշերներով՝ շտապօրէն, կացիներու կայծարձակ հարուածներուն տակ... Եւ հովերը դժբախտ քաղաքներէն՝ այրուած մեռելներու մահուան հոտը ձեզ բերին:

Ոչի՛նչ չը հասկցաք, բայց ձեր ծնող ուղեղներուն մէջ սարսափը և վրէժը իրենց յիշատակները ցանեցին, Եւ թերևս սպագայ հերոսութիւններու ահաւորագոյն հունար իր տեղը ինկաւ... Գիտեմ որ, երբ ձեր խանձարուրներուն մէջէն շարժեցիք ձեր ձեռքերն շուշանափայլ, Անոնք մահուան վարդերուն պէս կարմրեցան ձեր մայրերուն արիւնէն իսկ, Եւ համբոյրի, օրօրներու, զգուանքի և սիրոյ քաղցրութեանցը տեղ, Ո՛վ գիտէ, թերևս կաթիլ մը արիւն էր որ ինկաւ ձեր աչքերուն և ձեր բերաններուն մէջ... Ա՛հ սարսափներու ցնորաբեր օրեր, երբ սիրտի մեռնիք յիշատակներու դուռներուն առջև, երբ...

Գուր զժողքներու պատիժներուն մէջ ծնած անմեղ և քաղցրադէմ հրեշտակներ, Օրերով լացիք, հեծկլոսացիք՝ անձանօթին չարութեանը դէմ անգօր մերկութիւններ, Բայց լոող չի կար: Չեզ համբուրող բերանը իր համբոյրին մէջ էր ոգեվարած... Չարակամ և անգիտակից բնութիւնը կար միայն մեղաւոր մարդկութեան անասնութեանը հետ... Ձի՛ հակցաք թէ ինչո՞ւ ժպիտի տեղ արցունք էր որ ծաղկեցաւ ձեր աչքերուն մէջ,

Ինչո՞ւ ձեր բնածին առհասարակ չձանձցուած սէրերու կրակէ կարօտն ունէր:
 Ինչո՞ւ լուսնին թռչուններուն գեղգեղները և ինչո՞ւ հեռաւոր ու սև ոռնուռները սաստկացան...:
 Ինչո՞ւ առուակներուն ջուրերը լուսաւոր և երջանիկ փրփուրներ չունէին...:
 Ինչո՞ւ ձեզ ստեղծող մարմինները սրածուեցան ձեր բորոյններուն առջև,
 Ինչո՞ւ դրացի գերեզմանոցին մէջ կիսամեռներուն մարմինները պարիսպներու պէս բարձրացան...:
 Եւ ինչո՞ւ ժրջանն ու բարեկենցաղ գիւղերը իրենց դաշտերուն և մանգաղին հետ մոխրացան:

Օրեր անցա՛ն... մահը յոգնեցաւ և արևմուտքէն կեղծուպատիր ձեռքեր,
 Ձեղի՛ իրենց անգուլթ օրբուլթեան մտտեանը բերին, բաժին մը չոր հացի հետ,
 Ու խելալորոյս՝ սկսան ձեր մատաղ հոգիներուն մէջ իրենց ստուլթեան սերմերը ցանել:
 Աստուածներու խորհուրդէն և անունէն խօսեցան և փրկութեան դուռներ ցուցուցին...:
 Իբր որդուլթիւն՝ ցնցոտի՛ մը նետեցին ձեր մերկ և ազգուն մարմիններուն վրայ,
 Ցանցեր հիւսեցին ձեր անբիծ կարապի անմեղութիւնը վանդակելու համար:
 Եւ թշնամիին սուրբուն տեղ՝ իրենց շահանգիլը և մեղաւոր խաչերը շարժեցին...:
 Իրենց պիղծ ծոցերը և իրենց արծաթէր զոհերուն համար միայն բաց էր,
 Իրենց բարի ժպիտը կեղծ էր, իրենց խոստումը մահաբոյր և նայուածքնին ծածկամիտ,
 Իրենց բուրվառին մէջ մեր արիւնն էր որ խուսկի փոխան կը ծխար,
 Իրենց սկիհը մեր արցունքովը լեցուած էր, և այն հայը զոր ձեր առջև նետեցին,
 Մեր թշուառութեան և մեր ստառապանքին վարձատրութեան արժէքն էր անգուլթ:
 Քրիստոսին խօրքը ծամածռեցին ստրկութեան՝ բնքները՝ րհնաբանելով՝
 Եւ ուղեցին ձեր դուրսը կեանքերուն վրայ արևմուտքի սակարաններուն հիմնաքարերը շարելու...:

Զարհուրելի՛ անցեալ երբ մոխիրներուն վրայ ծնաք և կարմիրներէ՛ն քալեցիք,
 Բայց այսօր դիտէք թէ ինչո՞ւ համար մեր արիւնը ծով առ ծով՝
 Տարիներով՝ և անխնայ և ստրկօրէն և հերոսաբար ձեր ծնած հողը որդեգրեց...:
 Ցեղը ապրի՛լ կուզէր, իր շղթաները իր ոտքերուն տակ թափել՝ կուզէր,
 Իր կապանքները փշրել՝ կուզէր, իր աչքերը սրբել իր ձայնը որոտալ՝
 Ապրի՛լ կուզէր, ստեղծել կուզէր, պայծառօրէն վերածնել՝ կուզէր,
 Որովհետև ինքն ալ նախահայր էր և գեղեցկութեան և զգայունի՛ և ազգերո՛ւ,
 Որովհետև հպարտ էր իր անցեալէն, իր մտածումէն, իր ուժէն և իր կարմիր փառքէն,
 Որովհետև ինքն ա՛լ իր սակի ձայնը ունեցած էր հնօրեայ մարդկութեան մըրիկին մէջ...:
 Ինքն ալ եղած էր ջահակի՛ր, սերմնացո՛ւն, դաղափարապա՛շտ, և արքա՛յ, և դիւցազա՛ն,
 Եւ վերստին ապրի՛լ կուզէր, գեղեցկանալ և իրականանալ կուզէր, կեանք կուզէր յափշտակել և կեանք, կեանք...:

Ձեր ձեռքերը օտարին հպումէն յետ քաշեցիք, մերինները պատրաստ են և զինաբարձ:
 Անոնք մեր փլատախներուն վրայ իրենց ետամուլի դաւաճանն ու կեղծ քարոզը կուզեն ցանել:
 Այսուհետև ձեզի հետ ենք մենք, ս՛վ մահուան արգանդէն կեանքին մէջ ծնանող Որբեր,
 Մեր արգար մտածումը ձեր սիրոյն համար բմբուս է, և մեր սուրը ձեր սիրոյն համար պիտի ապրի:
 Մեր ճշմարիտ սուրը և մեր Գրօշը պիտի ապրին՝ որովհետև կամքերնին կարմիր է և վրէժնին անպարտելի,
 Մեր սուրը պիտի՛ ապրի, կեանքը ստեղծելու ու մահը անգամ մըն ալ մեռցնելու համար...:
 Մեր սուրը պիտի՛ ապրի՝ փրկութեան և ազատութեան արեգակներուն ի խնդիր՝
 Կեանքին համար, յոյսին համար, արգասաբեր հողին և մայրական Հայաստանին համար:

ՍԻԱՄԱՆԹՕ

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ի Ա Մ Ն Ե Ր

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԿՐԱԿԱՆ

Սասունի՝ 1901 յուլիսի կալուցներու՝ բնկամների

(Վ Ե Ր Զ)

ԱՐԹԵՆ ՀԷՆԸՔՑԻ.—21 տարեկան, երկարահասակ,
 շէկ մաղերով, եռանդուն երիտասարդ: Յեղափոխական
 գործը միշտ բարձր էր դասում սեփական գործերից,
 և շատ անգամ վերջիններս զոհում առաջիններին:
 Մասնակցեցաւ լաճրկանցիքի կուխն, և այնտեղ ծնկնե-
 լից վիրաւորւելով՝ փոխադրւեց հիւանդանոց, խզան
 գիւղը երբ թիւրքերը գրաւեցին Գեղի-Գուզան, մտան
 նաև խզան, ուր նոյնիսկ հիւանդանոցին մէջ սպանեցին
 Արթենին:

ԽԱՉԻԿ ՄՇԵՑԻ.—22 տարեկան, միջահասակ, շէկ
 մաղերով, ծաղկատար, կորովի երիտասարդ: Փոքր հա-
 սակից խկ՝ աչքի էր ընկնում իր կուռղ բնաւորու-
 թեամբ: շատ անգամ էր պատահում, որ նոյնիսկ ա-
 թեամբ մենանջին առիթով կուխներ էր անում թիւրք երե-
 խաների հետ, որով միշտ տեղի էր տալիս հօր յան-
 դիմանութիւններին: Հայրը որմնագիր էր. ինքն ևս մի
 ժամանակ այդ արհեստով օգնեց հօրը: Բայց որմնա-
 գրի աշխատութիւնը շուտով ձանձրացրեց նրան... Նրա
 միակ ցանկութիւնն էր զինուոր դառնալ և Սասուն եր-
 թալ: Այդ առիթով նա դիմումներ արեց յեղափոխա-
 կան մարմիններին, բայց մի քանի անգամներ մերժւեց:
 Սակայն երբ կուխը սկսեց, նա ինքնաբերաբար մտաւ
 կուռղներին շարքը: Գեղի-Գուզանի կուխ ժամանակ վի-
 ռաւորւեց և գերի ընկաւ թիւրքերի ձեռքը, որոնք
 խնամքով վերցրին իրեն, յոյս ունենալով որ պիտի կա-
 թողանան նրանից գաղանիքներ որսար: Այդ նպատակով

առանձին ջանք թափեց նոյնիսկ կուսակալը, բայց միշտ ի զուր: Վերջին անգամ, երբ թշնամիները յոյսները կտրեցին նրանից ունէ գաղտնիք կորզելու, փայտի հար- ւածներն տակ ջարդ ու փշուր սպանեցին...

ՏԵՐ ԳԱՐԻԲԷԼ ՓՈՒՐԽՎԱՅԻ.— 40 տարեկան: Աչքի ընկնող մասնակցութիւն ունեցաւ գործին 1894 թւի կռիւների ժամանակ, երբ իր օրինակելի քաջութեամբ խրախոյս եղաւ շատերին: Գուցից, կոտորածից յետոյ՝ Քոռ-Սըլօ յայտնի քիւրդ աղան նրան ընտանիքով միա- սին աքսորեց Բասնաց գաւառ, ուր մի քանի տարի մնալուց յետոյ՝ կրկին վերադարձաւ Փուրխավ (Տալու- րիկի մի թաղ): Երբ Հրայր Տալուրիկ մտաւ, Տէր-Գար- րիէլ բարոյական մեծ օժանդակութիւն ցուց տւաւ նրան, ոյժ տալով նրա պրօպագանդին: Գուցիցի ատեն, երբ պէտք եղաւ Տալուրիկի ժողովուրդը փոխադրել Գէլիէ- Գուզան, նա էլ եկաւ իր հօտի հետ և մասնակցեցաւ մի- օրեայ կուրսին: Գուցիցից վերջ՝ Տալուրիկ է վերադառ- նում. ճանապարհին յանկարծակի կերպով պաշարոււմ է քրդերից և սպանոււմ, Խլհովիտցի Կամէ անունով 80 ամեայ մի ծերունու հետ:

ՍՏԷՓՕ ՕՍԷԵԱՆ.— Գէլիէ-Գուզանցի, 24 տարե- կան, ամուսնացած, կուռղ յայտնի ոյժ, որին մատով էին ցոյց տալիս գիւղացիները: Քեաթըպ Ավէի եղ- բայրը: Բաւական մեծ մասնակցութիւն ունեցել էր նաև 1894 թւի կռիւների ժամանակ: Գուցից և սպան- ւեց Գէլիի կուրսն ատեն. դիակը անյայտ մնաց:

ԱԼԷՔՍԱՆ ՄԱՀՏԵՍԻ ԱՂԱՋԱՆԵԱՆ.— Մշեցի, 30 տարեկան, գեղեցկազէմ և առոյգ երիտասարդ, հա- րուստ ընտանիքի զաւակ, հայրը քաղաքի մեծ կալա- ծատէրերից մինն էր: Գիտէր լաւ ձի նստել և ուղիղ նշան խփել: Երբեմն ծառայում էր կառավարութեան մօտ՝ իբրև ձիաւոր ոստիկան: Վերջերը թողել էր այդ ծառայութիւնը և գործում էր իբրև յեղափոխական: Սասուն գնացող կամաւորներից մէկը եղաւ: Ծնողքը շատ աշխատեցան նրան արգիլել լեռ գնալու և յաջո- ղեցին էլ անգամ: Բայց մի օր Ալէքսանն իր զէնքերը մօտակայ գիւղը ուղարկելով, ինքն ևս մի պատրակով տնից դուրս գալով՝ ուրիշ կամաւորների հետ գաղտնի՝ Սասուն անցաւ: Գուցի ամենատագնապալի ժամանակն էր: Թշնամին պաշարել էր Գէլիէ-Գուզանը իր շրջա- կաներով: Լինում է Մըջըլների ամենավտանգաւոր կուռում. նոյնպէս և Քոփի վանքի կուռում: Այս վեր- ջին կուցից յետոյ գեան անցնելիս, ջրի հոսանքիցն է տարոււմ թէ Գուռթըք բարձրանալիս սառնամանիքին զոհ լինում, յայտնի չէ. անյայտանում է:

ԱՎՋԱՆ ԱՍԷԵԱՆ.— Մշեցի, 25 տարեկան, ամուսնա- ցած. հայրը կոշկակար էր, ինքն ևս պարապում էր նոյն արհեստով: Գուցիները սկսելուն մտնում է կամա- ւոր զինւորների շարքի մէջ: Դաշտ վերադառնալիս, Գուռթըքի բուքերից է բռնոււմ, ընկերներից ետ մնում ու ցրտահար մեռնում: Մի քանի օր վերջ ճամ- բորդ սասունցիներ պատահում են նրա դիակին, զէն- քերը վրայից առնում են և թաղում:

ԸՌԻՔՕ ԿԸՆԷԵԱՆ.— Շէնքբցի, 85 տարեկան, բոլո- րովին ալեւորած, երկարահասակ, կարմրերես և երի-

տասարդական աշխոյժով. դէմքի աջ կողմի վրայ ճա- կատից մինչև այտի կէսը կրում էր մի խոր սպի մի ուրիշը ճակատի ձախ կողմում, դաշոյնի ուրիշ երկու հարւածներ ևս նկատոււմ էին ձեռքի և կողի վրայ և այդ սպիները ստացել էր քրդերի դէմ եղած կռիւ- ների մէջ, որոնցով լի է իր երիտասարդական կեանքի պատմութիւնը: Քիւրդերի վրայ յարձակելը նրանց ոչ- խար, տաւարը թալանել, փոխադարձաբար նրանց պատճառած մէկ վնասի փոխարէն տասն հատուցանել, նրա համար ամենասովորական բաներ էին: Այդպիսով նա մեծ սարսափ էր թողել քիւրդերի մէջ: 1894 թւի կռիւների ժամանակ մեծ քաջութեամբ կուցեցաւ թիւր- քերի և քիւրդերի դէմ, իսկ այս վերջին կռիւների ատեն երբէք կուռղների առաջին շարքերից չը հեռա- ցաւ: Երբ որ թշնամին պիտի գրաւէր իրենց գիւղը, իր ոչխարն ու տաւարը փոխադրել տալուց յետոյ, իր ձեռքով այրեց տան բոլոր պաշարեղէնները, որպէսզի թշնամիները չօգուտէին նրանցից: Գէլիէ-Գուզանի գրա- ւումից յետոյ, դաշտ իջնելու ժամանակ, Գուռթըքի մօտ, հանգիպում է մի խումբ քիւրդերի, որոնք ճա- նաչում են նրան և շրջապատում: Ընթան հերոսաբար կուռում է, բայց և սպանոււմ: Թշնամիները կոտոր- կոտոր են անում նրա մարմինը...

ԿՈՒՐՃՕ ԿԸՆԷԵԱՆ.— Նախորդի եղբայրը, 70 տարե- կան, սպանոււմ է, յայտնի չէ, կռիւներից ո՛րի մէջ:

ԱՐՈՒԹ ՀԱՐԹԵՐԹՅԻ.— 20 տարեկան, ընկերների հետ կուռած է եղել Աղձան գիւղում, ուր և սպան- ւել է:

ՉՈՐՍ ԱՂԱՋԱՆԻՆԵՐ ԱՐՇԱԿ, ՏԻԳՐԱՆ, ՍԷՅԳՕ ԵՒ ՄԻՆԱՍ.— Չորսն էլ կտրիճ զինւորներ: Գուցիների սկսե- լուն Սասուն գնացին իբրև կամաւորներ և մասնակցե- ցան բոլոր կռիւներին: Դաշտ վերադարձին, երբ Անդ- րանիկ սկսում է Գուռավուի մեծ կռիւը, սրանք ևս կուռում են Աղձանում. մի օրւայ պայքարից յետոյ անցնում են Շէյխ-Իւսուֆ գիւղը, ուր շարունակում են կուռել մինչև կէսօր. միայն վերջին փամփուշտը կրակելուց յետոյ է որ իրենք ևս սպանոււմ են:

ՅԱԿՈՒ ԿՈՐԱՎՅԻ.— 34 տարեկան, ամուսնացած, ե- ռանդուն երիտասարդ: Եղել է Սասնոյ բոլոր կռիւնե- րում: Սպանւեց Քեռու հետ:

ԿԱՍՊԱՐ ԿՈՒՐԱՎՅԻ.— 28 տարեկան, ամուսնացած, հարուստ ընտանիքի զաւակ. բաւական ժամանակ իբրև զինւոր ծառայել է Սասունի խմբերի մէջ, ապա իրենց գիւղը վերադառնալով՝ աշխատել է տեղական գործե- րում: Երբ Քեռին վերադառնում է Սասունից, միա- նում է նրան և նրա հետ էլ սպանոււմ:

ՆԱՋԱՐ ԿՈՒՐԱՎՅԻ.— 27 տարեկան, նոր ամուսնացած: 1904 թւին, երբ Հրայր փախստական է դառնում, սա իբրև զինւոր միանում է նրան, գնում է Ախլաթի կողմերը: Երբ Հրայր Սասուն է անցնում, Նաջար առ- ժամանակ զէնքը յանձնում է ու վերադառնում գիւղը: Գուցիները սկսելուն լեռն է գնում, մասնակցում է Գէլիէ-Գուզանի կուրսին, ապա Քեռու հետ դաշտ վե- րադառնում և նրա հետ էլ սպանոււմ:

զաւակները երբ զինւորները մեկնելիս էին լինում, նա միշտ լաց էր լինում և շատ խնդրում, որ գոնէ շուտով վերադառնան: Այնքան էր ընտելացել բոլորին, որ իւրաքանչիւրին ձախից ճանաչում էր:

Պատահում էր որ զինւորները հեռուից իջնում էին դէպի մօտակայք, այն ատեն նա իր տղաներին էր դիմում այս խօսքերով. «Օ՛, մալափէ՛ք, կըսին տղէք բկել են, ջամբրուկ մի քեատ ու մատ, սիր ընէ, թացան տարէ՛ք, գացէ՛ք մըտ տղէք, ի՛նչ նստըր իք մալափա՛, ծպացէ՛ք...»:—Իր գաւակներից մի տղան մշտական զինւոր էր դարձրել, որ շրջում էր խմբերի հետ. իսկ ուրիշ երկուքը տեղական զինւորների կարգումն էին:

Յիշենք այստեղ իր կեանքի վերջին օրերից մի անեկոտ, որ բացատրում է թէ ի՛նչ էր զգում նա այդ ատենները: Երբ կռիւները կամաց-կամաց փոխադրւեցան աւելի հեռուներից դէպի Գէլիէ-Գուզանի շրջակայքը, նա բաշել էր մի պուրակի մէջ և այնտեղ էր անցկացնում իր ժամերը: Պէտք է երևակայել թէ սրտի ի՛նչպիսի տրոփիւնով էր ականջ կախում պարբերաբար իրեն մօտեցող հարսների կամ զինւորների բայերի ձայնին, ի՛նչպէս ականջով լսում էր ամեն մի պատմածք կռիւների ընթացքի մասին, ի՛նչպէս ուրախանում, ի՛նչպէս էր յուզւում ու աղօթում...

Մի օր երբ իր առանձնութեան մէջ նստած հետեւելիս է լինում հեռուում որոտացող հրացանների ձայնին, իր բովի թփերի միջից լսում է մի երեխայի ձայն, օրը հետզհետէ աւելի է մօտենում, մինչև որ մի չորս տարեկան երեխայ իր դիմացն է կանգնում: Նա իր մայրն էր փնտրում, որ իրեն պուրակի մէջ թողնելով՝ գնացել էր զինւորների համար պաշար տանելու և որ ուշացել էր և որ շատ ուշացաւ... է՛հ, մայրը պատրաստ էր արդէն. Ընթաց դրաւ նրան իր ծնկների վրայ ու սկսեց փայփայել երեխային, որ նոյնպէս կարիք էր զգում ընկերոջ, մի կենդանի շունչի...

Երեկոյեան կողմ նրա մօտ են գալիս երկու զինւորներ, իրեն տեղափոխելու համար: Արեւ է կենում Ընթաց և միևնոյն ատեն ետևից բաշ տալիս անտէր երեխային: «Ի՛նչ ես ետևիցդ բաշ տալիս այդ երեխային, նկատում են նրան, թո՛ղ դրան այստեղ, մայրը ուր որ է կը գայ, կը վերցնի» — առհասարակ նման դէպքեր պատահում են — «է՛հ լա՛օ, ընչի իմալ կըսիք, հիմի Աստուած կըրակ կ'արկէ մըր վրայ, իս զէդի կը պըհէմ, որ Աստուած տեսնի ու զձըզ անփութ ձանի»:

Գէլիէ-Գուզանի կուրց վերջ փոխադրւում է կըրըշիկ, ուր վրայ են տալիս քիւրդերը: Սրանց և Ընթացի հետ եղողների միջև տեղի է ունենում խիստ կռիւ: Այստեղ սպանւում է Ընթաց, և Գաբօի արիւնն էլ խառնւում է սիրած զինւորների արեան...

Ա Մ Ս Ա Ն Ո Ւ Ր Ե Ր

Գուժայի պատգամաւորական ընտրութիւնների առթիւ վարած պայքարում Գաշնակցականները յաղթանակ են տարել Զանգեզուրի, Շուշու, Ղազախի, Բօրչալուի, Ախալքալաքի, Կաղզանի, Գանձակի, Սուրմալուի, Իջմիածնի, Նոր-Բայազետի ու Ալեքսանդրօպօլի գաւառներում և Ալեքսանդրօպօլ, Երևան, Գորիս, Կաղզան, Ախալքալաք ու Ախալցխա քաղաքներում:

Թիւրքական «Հեւտէյոս» փոխադրանաւը, 290 զօրքով փետր 12-ին, իրիկան ժամը 8-ին, կը մտնէր Միւլէզի շրանցքը: 24 քիլոմետր հեռաւորութեան վրայ չորս զինւորներ չուրը նետուեցան և լողալով Արիսուն հասան: 13-ին, չորեքշաբթի առաւօտ, 34-էն մինչև 44 մետր հեռաւորութեամբ 170 մարդիկ իրենց կարգին դասալէք եղան: Նաև մէջ մնացած զօրքը անոնց վրայ կրակելով՝ հինգ հոգի սպանեցին. միւսները յաջողեցան լողալով ցամաք հասնել և փախչել:

Պէլլութի մէջ մահմետական ամբողջ վերջերս գրգռւած է տեղացի քրիստոնեաներու և օտարներու դէմ՝ առանց սայտնի պատճառի: Թէ քաղաքի և թէ շրջականերու մէջ յարձակումներ և մինչև իսկ սպանութիւններ անպակաս են: Երկու Զուլիցերայիներ յարձակում կրելով գանակուճեր են: Բուս ճամբորդ մը փողոցի վրայ, առանց պատճառի, դանակի հարւած ստացած է կռնակէն:

Փրանսական և Գերմանական դեսպաններու դռան ներկայացուցած խիստ բողոքներու վրայ երկու Զուլիցերայիներու դէմ յարձակողները ձեռքաւարձ և պատժուած են:

Այսպիսի դէպքեր տասնեակներով կը հաշւին: Ոտի կանութիւնը անտարբեր է և մինչև իսկ մեղսակից: Ոտի կանսպետը չարագործները կը քաջալերէ և մինչև իսկ կը պաշտպանէ: Այլին, որ տղեցիկ մարդու համբաւն ունի, անցած կ'երեւի նոյնպէս Փրանսականներու կողմ: Կացութիւնը հետզհետէ տագնապալի կը դառնայ Հիւպատոսները խորհրդակցելով տեղեկագրած են իրենց դեսպաններուն և հրահանգի կը սպասեն:

Իսկ վերջին պահուն Այլին հեռագրած է Պօլիս, որ մահմետականներն ու քրիստոնեաները կը զինւնին՝ իրարու հետ կուտելու դիտաւորութեամբ և խնդրած է հրահանգներ: Այլիի կարծիքով այս գործի մէջ Անգլիան մտտ ունի:

Պօլսոյ մէջ օրւան դէպքն է պարտի լրտեսապետ Ֆէհիմ փաշայի Պրուսա աքսորելը: Սա այն Ֆէհիմն է, որ երկար տաշիներ թրքական մայրաքաղաքի պատուհասը դարձած և իր շարագործութիւնները վաղուց չափն անցած էին, բայց և այնպէս իբրև կուրօրէն ծառայող Համիտի ան որ անսահման վստահութիւնը դրաւ և աշատ քարտ ստացել էր իր ուզածը կատարելու: Իր աքսորը կը պարտի ոչ թէ իր շարագործութիւններու, որոնց հաւար ընդհակառակը միշտ կը վաշմատուէր, այլ Գերմանական շահերու դպչելու յիմարութեան, որը դարձաւ Գերման դեսպանի համար անձնական արժանապատուութեան ինդիք մը: Որչափ ալ Պօլսէն ստացւած տեղեկութիւններ մօտ 200-ի բարձրացնեն անոր շարագործութեանց թիւը, բայց և այնպէս վրտահ ըլլալու է, որ Սուլթանը իրեն կ'յը հաւատարմութեամբ ծառայողները շուտ չ'մոռնար. հետևաբար այս աքսորումը պէտք է նկատել ակամայ զիջում մը բարեկամ Գերմանիայ, և Ֆէհիմի համար՝ զբոսական ճամբորդութիւն մը դէպի թրքական նախկին մայրաքաղաքը:

Միացնայ — Նահանգներու Պօլսոյ դեսպանը խիստ դիմումներ ըրած է Գրան, որ Թիւրքոյ մէջ գտնուող ամբիկեան վարժարաններ օրինաւոր ճանչցւին և դպրոցներու շէնքերուն և կալածքներուն պաշտօնաթղթերը կանոնաւորուին, մի բան որ թրքական կառավարութիւնը երկու տարիէ ի վեր խոստացած է: Գործը դեռ առանց ծայրայեղութեան մղելու, դեսպանը աչքի առաջ ունի այն օգուտները, որ Ֆրանսիան ձեռք բերաւ Միտիլիի նահայից ցոյցը սարքելով, և կը պնդէ, որ պէտք է Միացնայի Նահանգներուն համար ևս ճանչցւին այն բոլոր իրաւունքները, ինչ որ կը վայելէ ամենէն նպատաւորած պետութիւն մը:

Նոր Գուժան կազմող 524 պատգամաւորներից մինչև փետրուար 25-ի դիշերը ընտրւած են 462, որոնք ըստ ուղղութիւնների հետեւեալ պատկերն են ներկայացնում. միապետականներ՝ 89, օրից 31-ը իսկական միապետականներ և

50, Կաթնիկ աղբիւր 10, Մլոյ րամայ 8, Նապալա 8, Բանդիբ 11, Խամ-
 շատ 5. 50, 9 մ. իւ. Ազնիւ 7, Արծազանց 7, Կոռնիկ 9. 70, Հարազատ
 4, 8 մ. իւ. Աշխարհ 4. 5, Տալրորիկ 2. 25, Ամարաս 2. 35, Արամազ
 3. 30, Անախալ 3, Վրէժ 3, Մարգարիտ 5. 80, Սասուն 3. 25, 1 մ. իւ.
 Ն. 1' 10, Ն. 2' 8. 80, Մ. 12. 70, Մարմատ 9. 30, ԵՃնիկ 10. 80, Փայտա-
 կար 3. 65, Ատրպատակ 5. 90, Զարեանդ 2. 85, 21 մ. իւ. Փննչի 4. 50,
 20 մ. իւ. Կոռն 8, Բողոք 2. 80, Սոխակ 5. 40, Միտրեան 14, Գործ
 8. 90, 20 մ. իւ. Մասիս 11. 80, Վ. Երկաթ 2. 30, Վ. Միտրիկ 2.
 20, Վ. Ամբոն 4. 10, Վ. Մէր 4. 20, Նուշ 1. 80, 3 մ. իւ. Հրաբուխ 2. 70,
 Վարդ 3 տաս 1. 20, 3 մ. իւ. Արեւափայլ 5. 20, Հիւսիսափայլ 3, 7 մ.
 իւ. Աստղ 11. 25, 13 մ. իւ. Լոյս 10. 30, Հնար 8. 15, 10 մ. իւ. Ն. 95' 6,
 Ն. 72' 6. 40, Ն. 73' 8. 20, Ն. 74' 1. 50, Ն. 75' 1. 25, 32 մ. իւ. Համար
 10, հւս 9, հւս 7. 75, Ժիրուհի 10, հւս 10, 7 մ. իւ. Ն. 67' 10, 33 մ. իւ.
 Զանգակ 24, Ն. 328' 1. 80, 22 մ. իւ. Աղբիւր 23. 50, Ն. 213' 12. 80,
 36 մ. իւ. Բաճիճի 11, 18 մ. իւ. Անիդ 7, Կրակ 5. 20, Արմատ 5. 50,
 Վրէժ Կայրենաց 9. 25, 28 մ. իւ. Թոռնիկ 6. 27, Ալիք 3. 8, Ժով 6. 17,
 2 մ. իւ. Ն. 15' 5. 70, Ն. 13' 5. 78, Ն. 20' 4. 27, Պետական 1. 80, հւս
 3. 35, հւս 2. 90, հւս 3. 50, հւս 3. 65, հւս 3, Մաս կամ ազատ. 4, 15
 մ. իւ. Վտակ 13, Նորարդոս 10. 50, Գնդակ 7. 50, 2 տաս արծազանց
 12, 29 մ. իւ. Համբիշ 17. 50, 33 մ. իւ. Ան 2, 18 մ. իւ. Եփրատ 8. 25,
 Անկնոծ 1. 80, Արծիկ 6, Արմէն 6, Վաստ 4, Բախշ 10, 15 մ. իւ. Խամ
 31. 90, 4 մ. իւ. Ն. 34' 10. 30, Ն. 36' 3. 45, 13 մ. իւ. Ժովատար 8, Մէր
 փաշա 8, 10 մ. իւ. Ն. 91' 14. 20, Ն. 98' 5, Զվարթ 2. 80, Ն. 372' 2. 60
 Ժարիկ 2. 15, Պատանի 4. 35. Զէյթուն 4. 75, Կոյս 6. 70, Տասն պե-
 տակ 3. 85, հւս 1. 80, հւս 2. 80, հւս 4. 35, հւս 3. 10, 13 մ. իւ. Ծար-
 պիկ 5. 30, Կտրիշ 10. 30, 1 մ. իւ. Ն. 1' 5. 4' 8. 60, Ն. 5' 4. 60, Ն. 7'
 13. 65, Ն. 10' 11. 50, Թախաթուի 44, 28 մ. իւ. Շիւնիկ 4. 90, Արապա-
 տակ. 2. 95, Գեղուքա 4. 10, Զարեանդ 2. 85, 19 մ. իւ. Բարձր 3. 10,
 Կանանց րազդիկ 7. 65, Անի 10, 10 մ. իւ. Ն. 96' 8. 50, Անի 2 տաս-
 նակ 28, օմ. անդ. հւ. 200 օմ. անսափ. 10, Տիկ. Սափարից
 10, Սմբատից 3. 30, Թարեմիկ 2, 30, Մուշեղից 3. 45, Եփրատ
 Գիւմի-ից 3, 19 մ. իւ. օմ. Ս. Ս. Ս. 20, հւս Ս. յեր 10, Անարիկից 5,
 Տիգրանից 3, Սայիփիան 3. Թաթեղ 2, Բողոք. բանկոր 25. 55,
 պ. Բուլեղիայից 6, Բակոյքից 3, Կարապետիան 5, 4 օմ. 16 ան-
 դամ. 16, Գարշո Խուշ-ից 6, Սոխի. Կարա-հն 6, 2. իւ. 30, 21 մ. իւ.
 օմ. օհան. 2, օմ. Կասիան 1. 50, Յով Գործոք 8, Ժողովրդից 4, օմ. Կո-
 փեցուց 1, Անուշից 13. 50, Տիկ. Նիւնից 20, Հանդ. Արդիան 4, ոսկ.
 իւմ. ժայռ 3, Նէշն. պ. Բուլեղիայից 14, Ն. 7' 4, 8. հւ. Մ. Ազատ-հն
 2, Կարմ. բանկորից 1, Սարգէս. ղրաշկ 3, Բժ. Հատից 10, Ն. 36' 10,
 Ն. 87' 10, Նոր. թիւ. Պանս. 10. 45, Գասա. Թարեմ. 5, Ալիսի 1. 50,
 մ. իւ. օմ. Զրիստայի 150, Գարշո Տիգ. 4, Ն. 8' 2. 75, մ. իւ. Տաս 6,
 3-ր. գն. գանձ Բ. Շ. 31. 5, Անուշից մանէլի Ն. 1' 30, Գիւլիանից 10, սը-
 խաշ Օհանց-ից 4, մ. իւ. Գեղորգեան 3, Երկնայիլ 30 մ. իւ. Յառաշ 63.
 47, Կարծիւն 538. 75, օր. Խորգ պիտա 17. 10, Շուշանիկ 36, Տուգանք
 Թաթնից 5, մասան Գով-ովից 5, Սարգ. հւ. Արշակ 5, հւ. 109 Ն. 1'
 ծայր: Ընդամենը 2517 ռուբլի 54 կոպէկ:

1906 Յուլիի նաշի:

Նովեր 142' 5. 50, Ն. 20' 8. 55, Թիք. զնդի զինուոր. 3. 20, Տիկին
 Նիկոյից 10, Ն. 15' 4. 46, Ժովի 7. 12, Վերայաս 4. 27, գ. մ. իւ. Փայլակ
 3. 50, գ. մ. իւ. Որբ 4. 50, Հրաբուխ 6. 80, Գուլան 37. 40, Աշտ երկ. 20,
 Փոքր Հայկ 15. 50, Ն. 254' 10. 50, Զնդան 30, Յոյս 10. օմ. Արծիկ 5,
 Մէր 7. 10, Անվախ 1. 35, Հայուհեաց իւմ. 3. 40, մ. իւ. օմ. Զարք 2,
 Միտ Սարգսեանից 1, Իսազկիկ 5. 95, Բուսիք 10. 50, Արթ իւմ. Զէյ-
 օնուշ 2. 50, հւս Ա. Ս. 30, 333 Զրիստայից 7. 75, 34 մ. իւ. օմ. Աշտարակ
 1, սր. զնդի զինուոր Նէր Ն. 1' 30, Կ. յոտ, Լալվար 5, Եսր. Գոմարի
 բանկոր 5, Ն. 305' 5. 50, Ն. 301' 9, 21 մ. իւ. օմ. Սոխի 8, օմ. Յակ.
 Երեմ 2, օմ. Առաք. հւ. Թար 2. 40, Փրիդիսից 3, Ն. 17' 3. 80, Հողագործ
 6. 50, Մաճկալ 5. 20, Գրիգոր Խոնիսից 2, Արշարայ 1. 90, 3 իւմ. կա-
 յարանի մշակներ 4. 20, Ոսկի օմ. ան ժայռ 6, հւս Գեղարթ 3, 21
 մ. իւ. սնու սուլան 3, Կրակ 5, Վ. Կայծակ մ. Ն. 7, 23 մ. իւ. Կարա-
 գեօզ 8, Ն. 235' իւ. 10. 2, Ն. 228' 18, Վէնար 3, Տէրտեղան 18, Մալա-
 ղից 18, Ն. 2' Նէր 8, Հոսից 1, Կամարից 8, Գ. ս. Տէր Գ. 3. Գր. Օրդից
 1, Գեղարդունի իւմ. 2, 13 մ. իւ. Ն. 129' 4, Ն. 287' 4. 30, Խզարձնե-
 րից 20. 20, Անի ք. իւմ. 15, 32 մ. իւ. Զիւր. իւմ. 4. 50, 32 մ. իւ. Հիգ.
 պայծ իւ. 2. 50, Կայարանի մշակ ա. իւ. 6, հւս ք. 6, Ն. 1 ս. ծայր 30
 հատ: Գումար 468 ռուբլի 25 կոպէկ:

1906 Օգոստոսի նաշի:

Սալմաս 5- 40, Իհեուքա 5- 90, Փայտակար 2- 20, Կուրիանիկ
 գն- 1- 55, Արեւն գեղ 14, Միտ Սարգից գեղ 1, Մրրիկ իւմից 5- 50,
 Կուր- գնե- գեղ 2- 70, 10 մ- իւ- 10, Երկարուղի 5, Մանու 3, Ման-ից
 6, Ախր- 3- 12, Եղ. Զարեան 10, Հ. Օհան-ան 5, Նաբլ- Աղիլի զը-
 քան 4- 80, Սարից 4, Ռադրից 2, Աղից 2, Նալ-ից 4, Սարգեանից
 2, Կաղսանից գեղ 5, Զախարայ 10, Միամուազ 3, Փիլիբանից 6,
 Արեւն գեղ 1, Առիւծից գեղ 5, Գոյն 4- 50, Օմ- Օհանից 2, Առա-
 բիլից 5, Փռնչի 3- 50, Թեճի 2, Վասպուրակ 7, Կարկուտ 2- 25,

Չարդախու 3, 25, Յառայ 11, Եսայի Ա, ից 10, Նաւր համարի բան-
 16- 50, Վրէժ Հայրոն 5, հւս 3, Արախ 3- 85, Կամվոսի Մախուլից 6,
 Տ-Եանից գեղ 10, Միանից 5, սանեակ 7, Ասոյ իւմից 8, Քերեակ
 իւմից 2, համար 312' 6, համար 313' 6, Լապեթ- արհ-միուք 7- 60,
 Սամի-ից 15:

Գումար 275. 62:

1906 Սեպտեմբերի նաշի:

Գեղարդ իւմից 5, Էմփան- գործ- բան. 4- 60, կանանց Շուսան
 15- 60, համար 283' 11, Մեղաուր իւմից 2- 90, Գարսեան 5, Եղ-
 Յարու- 11- 20, Միտ Սրգիս-ից գեղ 1, Առեւ- ռպր- աակ- 93- 66,
 Ասոյ 7- 75, Յով- Յակոբից 15, Արախու 3- 80, Յառայ իւմից 34,
 Իդէալ իւմից 6, Միր գործ- բանուրներից 24- 20, Զարք 3- 84, Ապա-
 կերք 3, Եղիկ 6. 35, Պատանի 5- 85, Զէյթուն 6- 70, Յոյս 2. 45,
 Լուսնեակ 1- 50, Օմ- համար 1, Տասնեակն 10- 50, Ա. եւ Գ- Երեւալ գա-
 ւուղ 7- 10, Գ- Երեւալ գաւուղ 3- 90, Սլաֆից 4, Նա-սիկից 4, Եղ- Շարքա-ից
 8, Եղ- Յարու- գործ- բան- 5- 60, Մեպոկ Սաւչեանից 10, Մնացական Կո-
 նիկի-ից 1, Էմփան- գ- բանուր- 6, Կանգիսերիկի բան- 5- 20, գեղ հւս
 5- 20, հւս 5- 18, Ասապաս իւմից 40, Սուրբատիկի գաւուղ 14. 11,
 հւս (բագրաս) 13- 69, Նալարուիկի բաւ- 11- 57:

Գումար 426 ռուբլի 35 կոպէկ:

Ահագոսականի Կեղ. Կոմիտէ'

1906 № 63 Հանգ. թերթով. Արազու օրացնից: Հ. Ա. ից 60
 դրան, Յ. Ա- 80, Բ. Ղ- 30, Մ- Մ- 30, Գ. Վ- Մ- 50, Ե- Մ- 30, Յ-
 Մ- 20, Ա- Հ- 40, Հ- Ջ- 55- Բ. Բ- 20, Ա- Բ- 40, Ա- Գ- 10, Ա- Մ- 40,
 Մ- Մ- 40, Մ- Ա- 30, Վ- Ա- 20, Ն- Ա- 5, Գ- Ղ- 30, Ա- Ե- Տ- Յ- 50,
 Մ- Յ- 10, Գ- Մ- 20, Ի- Մ- 25, Ովկիանոս 10, Ա- Մ- 30, Թ- Գ- 15,
 Ա- Մ- 20, Վ- Գ- 26, Ա- Գ- 10, Ա- Հ- 4, Ռ- Վ- 30, Բ- Ա- 6, Է- Օ-
 10, Ա- Գ- 6, Ա- Մ- 10, Մ- Վ- 10, Հբրէս 30, Արեւ 20- Տիկին Ար-
 Գե 20, Մ- Թ- 30, Մ- Ա- Թ- 4, Մ- Բ- 30, Յ- Մ- 30: Բլուրի օրացնից՝
 Բ- Թ- 44, Բ- Ա- 25, Թ- Տ- 10, Յ- Յ- 8, Մ- Տ- Յ- 40, Մ- Մ- 60,
 Մ- Տ- Յ- 15, Հ- Ղ- 30, Թ- Մ- 6, Օ- Մ- 45, Թ- Մ- 5- Յ- 10: Գու-
 մար 1384 դրան: Անդամակարէր Արազու: 1906- մայիսի Գուման
 խուլից 21 դրան, Զարխափան խուլ- 80 1 | 2, Կայծակ խուլ- 13, Պատան
 Կակ խուլ- 13, Զանգի ժայռ 28—50, Անոյ խուլ- 14: Յուլիս Զանգի
 ժայռ խուլ- 28—50, Կայծակ 14, Համիկ 10, Գուման խուլ- 18, Անոյ
 խուլ- 13, Պատանեակ խուլ- 9- 75, Յուլիս Գուման խուլ- 18, Կայծակ խուլ-
 14, Պատանեակ խուլ- 9- 75: Գումար 233 դրան:

ԳԵՏԱՓԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆ 1905 սեպտ. 1-ից մինչեւ դեկտ. 31.
 Ամսավարներ, Երեւայացուներ, գեղներ, զիւղերու հանգանակած Ար-
 արայ իւմից դր. 1085. 30, Կրակ իւմից 607. 50, Անահիտ իւմի-
 ցից 100, Հայկազուն իւ. 104, Երեւայի միջոցաւ 1000, գումար
 2896. 80: ԳԻԼԱՆ ԿՕՄԻՏԵՆ 1905 թիւ հաշիւներից ամսավարներ,
 գեղներ, երեւայացուներ, երեկոյթ, տուգաններ, աւետիս, եւն, եւն: Կայծակ
 իւմից դրան 1003. 25, Ռոսեան իւմից 453, Լարաղալ իւմից 455,
 Փռնեց իւմից 594, Մեղու իւմից 833, Գորդ Հայաստանի իւմից 752,
 Հրիգ իւմից 470, Կարին իւմից 909, Վրէժ իւմից 246, Կարկուտ
 իւմից 60, Անահից տուգան 20, Լեւից գեղ 20, կողմակի գեղներ
 28, սիկին Գ-ից տեւախարսեան առքի 20, մի ինքոյնու երիտա-
 սարդներից 48, գեղ Թուք. Արե. 50, գեղ Ոմ 40: Գումար 6011, 25:
 ՊՕՐՏ-ԱՆՏՈՒՐ ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆ Իրիսափոր իւմից 194, Մր իւմից
 1223. 80, Եղիպեացի իւմից 232, Հրայր իւմից 468, Հատ իւմից
 463, Աղբիւր իւմից 625, Տանեն իւմից 212: Գումար 3417. 80:
 ԵԱՀ. Գ. Ի. ԿՕՄԻՏԵՆ 1905 փետ. 7-ին կայացած պարհանդէսից
 դր. 2000, Լոգանի Անդրանիկ իւմից 1905 թիւ անդամակարներ 380,
 մասիցայի մուս 5. 25: 1906 յունուար 1-ից մինչեւ յունիս 1 ամսա-
 վարներ 450 դրան, երեւայացուներից 500, Կաթից 110, թիւ 64 հան-
 գանակութեան թերթով 2070, գումար 3564. 25:

Բնդանուր գումար 17507 դրան 10 կ-

Գումարի Երեւայից:

1906 փետրուար, մարտ ամսական հետեւեալ խումբերից՝ Թաքով
 75, մարտ ապրիլ Լուսին 75, մարտ ապրիլ Արեւ 105, յունիս յուլիս
 Յաղիկ 90, փետ- ապ- Միհրդաս 105, Կորիւն 120, „Իրօտակի“ բաժա-
 նորդարութիւն Հ- Գ- 13, Եւր Գ- Ջ- 3 ամսական 15, մայիս ամսա-
 կան Բաճիկ խուլ- 65, Հանեսեանէն գեղ 292. 50, յուլիս Արծրուկի 25,
 Զաւեհ 70, Թանքայլ մայ- յուն- յուլ- Արուսեակ 420, Թանքայլ երեւա-
 ից հայ գիւղերի փամուռէի համար 50- Գումար 1520 50 դր- ողջ: